

Լևոն Հովսեփյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԱԽԵՐԸ. ՍԵՎՐԻ ՄԻՆԴՐՈՄ



*Սերի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի
հասարակական-քաղաքական քննարկումներում*

32 (96)

Կ-87

Լևոն Հովսեփյան

Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ

*Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի
հասարակական-քաղաքական քննարկումներում*

5854

Երևան

Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն

2012



ՀՏՎ 32.001
ԳՄՊ 66
Հ 872

Հովսեփյան Լևոն

Հ 872 Թուրքիայի վախերը, Սերի սինդրոմ: Սերի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում / Լ. Հովսեփյան.-Երևան: «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն», 2012.-146 էջ

Գրքում փաստական նյութի հիման վրա փորձ է արված ներկայացնել Սերի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական, զինվորական ու գիտական ժամանակակից քննարկումներում: Դրա համատեքստում շոշափվում են նաև այդ երկրի հասարակական, քաղաքական միջավայրում առկա հոգեբանական կարծրատիպերին, ֆորիաներին առնչվող հարցեր ու որոշ տեսական մոտեցումներ: Գիրքը նախատեսված է բուրբազեռների, քաղաքագետների ու ընթերցող լայն շրջանակների համար:

Խմբագիր՝ Արտակ Ճաղարյան
Անգլերեն տեքստի թարգմանիչ՝ Դիանա Սամուկյան

Հայրանակը՝ 500:
Տպագրված է «Սամարի» ՍՊԸ տպագրատանը:

ISBN 978-999-41-2-631-6

© Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2012

Բովանդակություն

Ներածություն.....	4
Սերի սինդրոմի դրսևորումները քաղաքական ու գիտական քննարկումներում.....	7
Սերի սինդրոմի դրսևորումները զինվորականության շրջանում.....	23
Քարտեզների պատերազմ.....	35
Սերաֆորիան հանրային գիտակցության մեջ և հակաարևմտականությունը.....	44
Սերաֆորիան որպես ազգային անվտանգության դիսկուրսի քաղաքիչ.....	67
Վերջաբան.....	76

Ներածություն

Թուրքիայի հասարակական-քաղաքական, գիտական ու վերլուծական տարրեր շրջանակներում ընթանում են Թուրքիայի առջև կանգնած մարտահրավերների, ներքին ու արտաքին քաղաքականության, պետության տեսականի մասին քննարկումներ, որոնց շրջանակներում դրսևորվում են թուրքական հասարակության ու քաղաքական շրջանակների վախերն ու ֆոբիատիկ ընկալումները: Այդ համատեքստում ակտիվացել են տարբեր ոլորտներում քննարկումները Թուրքիայի հնարավոր մասնատման, ամբողջականության խաթարման ու արտաքին ուժերի կողմից նման մախաձեռնությունների առկայության մասին: Այդ երևույթն ընդունված է անվանել «Սերի սինդրոմ», «Սերաֆորիա»¹ կամ «մասնատման ախտանշիչ»: Այսպիսի քննարկումները թուրքական պետական ու հասարակական մակարդակներում առկա րազում խնդիրների համալիր ընկալման արդյունք են, որոնք իրենց հերթին ծնում են մտավախությունների ու ֆոբիաների վրա հիմնված ենթադրություններ ու ձևավորում հոգեբանական կարծրատիպեր:

Իսկ ինչու՞ են պայմանավորված նման ենթադրություններն ու քննարկումները ներթուրքական միջավայրում: Նախ՝ երկրի ներսում ընթացող հասարակական-քաղաքական զարգացումներն ու առկա հիմնախնդիրները, ինչպես, օրինակ, քրդա-

կան հարցը, աշխարհիկություն-իսլամ հակադրությունը, ինքնուրյան ճգնաժամը, Թուրքիայի զարգացման հեռանկարը, նոր ընկալումների ու մեկնաբանությունների առիթ են դարձել: Բացի այդ, Թուրքիայի համար արտաքին քաղաքականության ոլորտում նկատվող ոչ նպաստավոր տեղաշարժերը այս կամ այն կերպ ձևավորում են հասարակական տրամադրություն, որի շրջանակում էլ ի հայտ են գալիս այլատյացության կամ ուղղակի արտաքին աշխարհի նկատմամբ կասկածամտության դրսևորումներ:

Թուրքական պետության տարածքային մասնատման կամ հնարավոր տրոհման մասին քննարկումներն ունեն երկու կողմ՝ ներքին և արտաքին:

Առաջինը վերաբերում է ներքին պայմաններից բխող, ճգնաժամային զարգացումներով պայմանավորված այնպիսի իրադարձություններից, ինչպիսիք են՝ քրդական հիմնախնդիրը, աշխարհիկություն-իսլամ հակադրությունը, ինքնության ճգնաժամը: Երկրորդ կողմն առնչվում է արտաքին ուժերին, որոնց քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, ինչը չի համընկնում թուրքական շահերին, ընկալվում է որպես դավադրություն պետության նկատմամբ: Լայն տարածում են գտնում, այսպես կոչված, «դավադրության տեսությունները» (*conspiracy theories*), որոնցով շատ հաճախ Թուրքիայում մեկնաբանվում և բացատրվում են թե ներքին, թե արտաքին քաղաքական հիմնախնդիրները:

Նման ընկալումները կրում են ինչպես քրդական խնդրի և քրդական պետության հնարավոր ստեղծման, այնպես էլ Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ազդեցությունը: Կարող ենք ասել, որ «Սերի սինդրոմն» ունի հիմնականում քրդական ու հայկական ուղղվածություն, չնայած այդ երևույթը շատ դժպեղբուն առաջին հերթին ասոցացվում է այս խնդիրների հետ, սակայն այն ունի ավելի խոր-

¹ Չնայած «Սերի սինդրոմ», «Սերաֆորիա» եզրույթներն իրենց անունը ստացել են Սերի պայմանագրից, այդուհանդերձ, դրանք արտահայտում են ավելի լայն իմաստ՝ ներառելով տարածքային մասնատման վախը, արտաքին աշխարհի նկատմամբ անվստահությունը, դավադրության տեսությունների վրա հիմնված աշխարհընկալումն ու այլ ֆոբիաներ: Թուրքիայում որոշ քաղաքական շրջանակներ «Սերի սինդրոմ»-ի համատեքստում են դիտարկում երկրում առկա մի շարք հիմնախնդիրներ, ինչպես օրինակ՝ ժողովրդավարացման գործընթացը, սպազային փորձամասնությունների իրավունքների ձեռքբերման հիմնախնդիրը, հասարակական-քաղաքական ոլորտի քաբեիոլտմաների անցկացումը և այլն:

քային բնույթ, ինչը կապվում է արտաքին դերակատարների կողմից վարվող քաղաքականության ու թուրքիայի ներքին մի շարք հիմնախնդիրների հետ:

Հատկապես արևմտյան և որոշ թուրք մասնագետների կողմից կատարվել են հետազոտություններ, որոնք վերաբերում են հիմնականում «Սևրի սինդրոմի» սոցիոլոգիական, հոգեբանական տեսական կողմերին: Սույն աշխատանքի նպատակն է ի ցույց դնել «Սևրի սինդրոմ»-ի դրսևորումները թուրքիայի հասարակական-քաղաքական, գիտական ու զինվորական միջավայրերում ընթացող ժամանակակից քննարկումներում, վեր հանել թուրքիայի անվտանգության համար զգայուն համարվող մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ թուրքիայի տարբեր շրջանակների մտտեցումները՝ «Սևրաֆորիայի» լուսի ներքո: Սույն հետազոտությունը կատարվել է թուրքական ժամանակակից մամուլի, վերլուծական, ինչպես նաև գիտական տարբեր ուսումնասիրությունների հիման վրա, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել ներկայացնել «Սևրի սինդրոմ»-ի առկայությունը թուրքիայի տարբեր շրջանակներում:

Սևրի սինդրոմի դրսևորումները քաղաքական ու գիտական քննարկումներում

«Սևրի սինդրոմ»-ի ժամանակակից դրսևորումները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է անդրադառնալ Օսմանյան կայսրության քայքայման ու հանրապետական թուրքիայի ստեղծման ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձություններին, որոնք այս կամ այն կերպ ընկած են թուրքիայի անվտանգության շուրջ ժամանակակից քննարկումների առանցքում:

Հանրապետական թուրքիայի հռչակումից հետո ռազմաքաղաքական ղեկավարության մոտ, սկզբնական շրջանում իշխում էր, այսպես կոչված, «փերմապահպանման բնագրը», որտեղ երկրի անվտանգությունն ամբողջացվում էր հիմնականում տարածքային ամբողջականության ու ինքնիշխանության պահպանման գերխնդրի շրջանակում: Եվ այդ ընկալումներն ունեին իրենց օրյեկտիվ պատճառները, քանի որ թուրքիայի Հանրապետությունը հիմնվեց Օսմանյան կայսրության քայքայման ու մասնատման և պատերազմների զնով կայսրությունից միայն փոքրասիական թերակղզին «փրկած» տարածքների վրա: Իսկ երկար ժամանակ թուրքիայի քաղաքական մշակույթը կրում էր «մնացածը պահելու» գերխնդրի ազդեցությունը: Հետագայում ևս մնան ընկալումները շարունակում էին լուրջ դեր խաղալ երկրի քաղաքական ու զինվորական իշխանական շրջանակներում՝ թուրքիայի արտաքին քաղաքականությունը հարմարեցնելով այդ հրամայականին:

Ժամանակակից քննարկումների ու աշխարհընկալման վրա իրենց մեծ ազդեցությունն են պահպանում թուրքիայի պատմական անցյալի այն իրադարձությունները, որոնք մինչև օրս իշխում են հասարակական-քաղաքական շրջանակների աշխարհընկալման վրա: Խոսքը վերաբերում է առաջին հերթին

1916 թ. Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից Օսմանյան Թուրքիայի տարածքային մասնատման գաղտնի պայմանագրին /Սայրս-Պիկո/, 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սերի դաշնագրին ու նույն բվականի նոյեմբերի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի կողմից ստորագրված իրավաբար վճռին²:

Գեռև Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ակնհայտ էր դառնում Օսմանյան կայսրության փլուզումն ու տարածքային մասնատումը, երիտթուրքական պարագլուխները արդեն իսկ գիտակցում էին մնան հանգուցալուծումը և ամեն կերպ փորձում էին ինչ-որ ձևով դիմագրավել դրան, գտնել Օսմանյան կայսրության պահպանման այլընտրանքային ուղիներ: «Քառյակ դաշինքի» կազմի մեջ Թուրքիայի մտնելը «Իբրիհաթ վեթերաքըը» երիտթուրքական կուսակցության անդամ Մելվան Ջադե Ռեֆաթը քաջատրամ էր Անտանտի կողմից Օսմանյան Թուրքիան մասնատելու ծրագրի առկայությանը: Ըստ Ռեֆաթի վկայությունների՝ պատերազմի նախօրեին երիտթուրքական կոմիտեի գաղտնի խորհրդակցությունների ժամանակ առաջ էլ քաջվում այն դրույթը, որ Անտանտի տերություն-

ներն արդեն իսկ ծրագրել են Օսմանյան Թուրքիայի մասնատումը և միակ դաշնակիցը կարող է լինել Գերմանիան³:

Առաջին աշխարհամարտի տարիներին արդեն Անգլիան և Ֆրանսիան 1916 թ. գաղտնի համաձայնության էին եկել Օսմանյան Թուրքիայի մասնատման և ազդեցության գոտիների բաժանման վերաբերյալ: Սայրս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Օսմանյան Թուրքիան զրկվում էր իր ասիական տարածքներից, որոնց նկատմամբ հաստատվում էր անգլիական ու ֆրանսիական իրավասությունները: Կովկասյան ճակատում իր ունեցած ռազմական առաջադացումից հետո Անգլիան և Ֆրանսիան իրենց ծրագիրը ներկայացրեցին Ռուսաստանին, որը նույնպես մասնակցելու էր բաժանմանը: Ի դեպ, Սայրս-Պիկոյի համաձայնագրի վրա առկա է ռուսական կայսր Նիկոլայ 2-րդ-ի նշագրությունը⁴:

Ինչ վերաբերում է Սերի դաշնագրին, որն այդպես էլ կյանքի չկոչվեց, այսօր Թուրքիայում ընկալվում է որպես «քողարկված մի գործիք», որը ցանկացած հարմար պահի կարող է երևան հանվել արտաքին ուժերի կողմից: Նման ընկալումներն առկա են ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական, գիտական ու զինվորական որոշ շրջանակների մոտ:

Սերի պայմանագրից «նազապուրծ» եղած Թուրքիան տարածքային կորստի վտանգի տակ հայտնվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ ներկայացրեց Թուրքիային: Մասնավորապես, 1945 թ. մարտին ԽՍՀՄ-ը չեղյալ է հայտարարում 1925 թ. խորհրդա-թուրքական բարեկամության մասին դաշնագիրը՝ պահանջելով լուծել ինչպես սևծովյան նեղուցների խնդիրը, այնպես էլ կարգավորել խորհրդա-թուրքական սահմանը: Խոսքը նախ և առաջ վերաբերում էր Կարսի և Արդահանի վերադարձին

² Ինչ վերաբերում է վիստրյան իրավաբար վճռի ներկա իրավական կարգավիճակին, ապա այն վերջնական է և պարտադիր է կատարման համար: Այն չունի ժամանակային սահմանափակում և նրա կարգավիճակը կախում չունի վճռի հետագա ճակատագրից: Միջազգային իրավունքը, ընդհանրապես չի նախատեսում վճռի չեղյալ հայտարարում: Ըստ միջազգային իրավունքի կողմնորդ, համաձայնելով իրավաբար որոշմանը ներկայացնել իրենց վճռը, մեկընդիկ ընդունում են, որ իրենց կողմից կատարման համար պարտադիր կլինի իրավաբարի ցանկացած վճիռ: Կողմնորդ մեկի մերժումը կ կատարածելու իրավաբարությունը, չի ազդում վճռի վավերականության վրա: Ըստ այդմ, քանի որ իրավաբարության հայցը ներկայացվել է ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև 18 այլ երկրների կողմից, ոտտի վճիռը պարտադիր է բոլոր հայցվորների համար: Այն պարտադիր է նաև իրավաբարի Միացյալ Նահանգների համար, քանի որ ԱՄՆ նախագահի ցանկացած պաշտոնական դիրքորոշում հանդիսանում է երկրի դիրքորոշումը, և իրավաբարությունից բխող քայլերը պարտադիր են կատարման համար: Ավելի մանրամասն տես՝ Պապյան Ա., Կուրդո-Վիստրի իրավաբար վճիռը Հայաստանի ու Թուրքիայի սահմանի վերաբերյալ, Ազգ. 28 դեկտեմբերի 2006:

³ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Եր. 2007, էջ 8-21:

⁴ Նույն տեղում, էջ 22-35:

ՀԽՍՀ-ին: Անկարայում ԽՍՀՄ դեսպան Վինոգրադովը նշել է, որ Կարսն ու Արդահանը անհրաժեշտ են ոչ թե Խորհրդային Ռուսաստանին, այլ Հայկական ԽՍՀ-ին, քանի որ վերջինի տարածքը շատ փոքր է: 1945-1946 թթ. Հայկական հարցը, ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջները երկու երկրների քաղաքական օրակարգից տեղափոխվում են միջազգային՝ Մեծ տերությունների բանակցային գործընթաց⁵:

1975 թ. թուրքական «Հյուրիեթ» պարբերականն, անդրադառնալով այդ ժամանակահատվածում ստեղծված իրավիճակին, հանգել է այն կարծիքին, որ Թուրքիայի կառավարությունը գիտակցում էր, որ ԽՍՀՄ-ի հետ վիճաբանությունն անիմաստ է, տարածքների զիջումն՝ անխուսափելի: Ըստ բերքի՝ ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի աջակցության բացակայության պարագայում Թուրքիան ստիպված էր գրկվել իր արևելյան՝ պատմական հայկական տարածքներից⁶: Իսկ այդ շրջանի թուրքական բերքերն անդրադառնում էին Թուրքիայի տարածքային ամբողջականության խնդրին՝ արտահայտելով՝ հակահայկական, հակախորհրդային գաղափարներ:

Թուրքիան գիտակցում էր իրավիճակի լրջությունը և, ապավինելով Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի աջակցությանը, կարողանում է չեզոքացնել ԽՍՀՄ-ի կողմից ներկայացված տարածքային պահանջները: Թվում էր, թե ԽՍՀՄ-ը վճռական է իր քայլերում և ուր որ է մասամբ կարող է վերականգնվել պատմական արդարությունը, սակայն խորհրդային կառավարությունը տեղի է տալիս արևմտյան ուժերի հետ դաշնակցող Թուրքիային:

Դեռ 1960-70-ական թթ. իրենց ուսումնասիրություններում թուրք պատմաբաններն ու քաղաքագետները մերժում էին Հայ-

⁵ Մելքոնյան Զ., Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1947 թթ., սևծովյան նեղուցների խնդիրը և Հայկական հարցը, Եր. 2009, էջ 4-9:

⁶ Նույն տեղում., էջ 25:

կական հարցի առաջացումը՝ փորձելով հիմնավորել, որ այն հայության խնդիրը չէ, այն «խորինվել» է եվրոպական մեծ տերությունների դիվանագիտության կողմից, որպեսզի միջամտեն և ազդեցություն ունենան Օսմանյան կայսրության գործերին: Օրինակ՝ թուրք հեղինակներ Մ. Հոջաօղուն և Վ. Գյուրսելը Հայկական հարցի ծագումը կապում էին Անգլիայի ու Ռուսաստանի դիվանագիտական ջանքերի հետ, որոնց նպատակը Օսմանյան կայսրության հանդեպ իրենց ունեցած տարածքային հավակնություններն էին⁷:

Թուրքական հասարակական-քաղաքական ու գիտական ժամանակակից բնագրություններում առավել ակնհայտ են դրսևորվում պետական ու հասարակական, արտաքին քաղաքական հիմնախնդիրները դավադրությունների համատեքստում քննարկելու և մեկնաբանելու կարծրատիպային մտտեղանկերը:

Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դասախոս, պրոֆեսոր Էրոլ Մանիսալլի 2005 թ. հրատարակումներից մեկի համաձայն՝ ԱՄՆ-ը և ԵՄ-ն ջանքեր են գործադրում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը խախտելու, դաշնային տիպի պետություն հիմնելու, թուրքական հանրապետության հիմնադրման ողջ փիլիսոփայությունն ու արժեքները քայքայելու ուղղությամբ, որին էլ «ծառայում են» Հայկական հարցն ու քրդական խնդիրը: Ավելին, ըստ նրա, Արևմուտքն աջակցում է Թուրքիայում քրդական ահաբեկչությանը, որը նպատակ ունի վերանայել Լոզանի պայմանագիրը՝ Թուրքիայից անջատել Հարավ-արևելյան Անատոլիան⁸ (*Անատոլիա հասկացությունը տեղաբնիկների թուրքացման, ազգայ-*

⁷ Новая история Армении в трудах современных зарубежных авторов. НАН Армении. Ин-т востоковедения, Редкол.: Р. Саважян и др., Ер. 1993, с. 14, 53.

⁸ Manisalı Erol, Neden Lozan?, 25.07.2005.

<http://www.acikistihbarat.com/Haberler.asp?haber=3438>. Նշենք, որ է.

Մանիսալյան 2009 թ. ապրիլին մերթափաչել է «Երզնեհեղին» անարբեկչական լսմաբերման գործով: Erol Manisalı tutuklandı, *Cumhuriyet*, 17 Nisan 2009.

նացման քաղաքականության շրջանակում արհեստականորեն տարածվել է նաև Հայկական բարձրավանդակի վրա: Աշխարհագրական առումով Հայկական բարձրավանդակը չի համընկնում բուն Անատոլիայի տարածքին: Անատոլիական սարահարթը փոքրասիական բերակղզու կենտրոնական մասն է՝ Պոնտոս և Տավրոս լեռնաշղթաների միջև՝ Հայկական բարձրավանդակից դեպի արևմուտք: Արհեստականորեն շրջանառության մեջ դրված Արևելյան Անատոլիայի տարածքն ընդգրկում է Հայկական բարձրավանդակը: 1920-ական թթ. սկսած Արևմտյան Հայաստանի տարածքը սկսեց կոչվել Արևելյան Անատոլիա⁹:

Մեկ այլ հրապարակման մեջ Մանիսալըն, հիշեցնելով 20-րդ դարասկզբին Եվրոպայի կողմից նախաձեռնված Սևրի պայմանագրով Թուրքիայի մասնատման քարտեզի մասին, նկատում է, որ եթե նախկինում Եվրոպան զենքի ուժով էր փորձում դա անել, այժմ փոխվել են իրականացման սկզբունքները, և Թուրքիան աստիճանաբար հայտնվում է «գաղտնի գրավման մեջ»¹⁰: Մեկ այլ բուրք պրոֆեսոր՝ Չեքին Յեքքինը, իր «Սևրը նորից կյանք է առնում» հոդվածում նշում է, որ Սևրի պայմանագրի իրողություն դառնալուց հետո Օսմանյան տարածքում ստեղծվելու էին հայկական ու քրդական պետություններ, իսկ Իզմիրն իր շրջակայքով տրվելու էր Հունաստանին: «Իմպերիալիստները Սևրի դույլները կրկին կյանքի կոչելու համար սպասում են հարմար պահի և ձեռքներից եկածներն անելու են, քանի որ նրանք չեն մոռացել Թուրքիան մաս-մաս անելու պլանների մասին: Ավելի պարզ ասած՝ Սևրի դռները մեկ անգամ ևս բացված են»¹¹:

⁹ Ayvazyan A., Western Armenia vs Eastern Anatolia, <http://www.hayq.org/upload/files/aa-EO4.pdf>.

¹⁰ Manisalı Erol, AB Muhipleri'nin Sevr Rüyası mı?, *Cumhuriyet*, 10.01.2003.

¹¹ Tarih Bilmenin Önemli ve ÇETİN YETKİN'in Yazısı, "SEVR YENİDEN YAŞANİYOR", <http://cahitaltiptekin.wordpress.com/2009/09/22/tarihbilmenin-onemli-ve-cetin-yetkinin-yazisi-%e2%80%9csevr-yeniden-yasaniyor-%e2%80%9d/>.

2006 թ. Արաբյուրքի ծննդյան 125-ամյակին նվիրված քննարկման ժամանակ բուրք պրոֆեսոր Ահմեթ Սալթըքը, խոսելով Թուրքիայի առջև ծառայած խնդիրների մասին, անդրադարձել է նաև Սևրի պայմանագրին՝ նշելով, որ ԱՄՆ-ը «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի շրջանակներում ձևավոխում է տարածաշրջանի քաղաքական քարտեզը, իսկ այս պարագայում Թուրքիան չի կարող խուսափել նման ճակատագրից: Ըստ նրա՝ «Սևրը աստիճանաբար կենսունակ է դառնում և ուղղվում է երկրի մասնատման ու տրոհմանը»¹²: Թուրքիայի համալսարանի դասախոս, քաղաքագիտության դոկտոր Ալի Քեմալ Օզգանի քննողմամբ՝ ԱՄՆ-ին ձեռնադրու չէ խաղաղասեր «Բուրդիստանի բանվորական կուսակցություն - PKK» (այսուհետ՝ ՔԲԿ), այլ այն ձգտում է կենսունակ պահել մարտնչող ԲԲԿ-ն և մեկուսացնելով դրա առաջնորդ Օջալանին՝ ցանկանում է ԲԲԿ-ում ձևավորել իրեն ավելի մոտ ուղեգիծ և դրանով իսկ հասնել Թուրքիայի մասնատմանը¹³:

Թուրքիայի Էրջիյե համալսարանի տնտեսագիտության բաժնի վարիչ, պրոֆեսոր Ջիհան Դուրան 2003 թ. իր հրապարակման մեջ համոզմունք էր հայտնում, որ Թուրքիան կրկին կանգնած է մասնատման ու տարածքային բաժանման սպասույթի առջև՝ նշելով, որ մասնատման ծրագիրը քաղկազած է 3 քայլից, որը ենթադրում է հայկական, քրդական ու պոմոսական պետությունների ստեղծում: Ըստ նրա՝ այդ նախաձեռնությունների ու ծրագրերի հետևում կանգնած է Թուրքիայի «ազգայնական դաշնակից» համարվող ԱՄՆ-ը: Թուրք պրոֆեսորը, ինչպես և մյուս հեղինակները, իրենց հրապարակումներում որպես Արևմուտքի նախաձեռնությունների պատմական ավա-

¹² Prof. Dr. Ahmet Saltık, Sevr Taksit Taksit Uygulanıyor, <http://www.corluhaber.com>, 11.12.2006.

¹³ "ABD, Türkiye'yi Iraklaştırma çabasında",

http://www.tempodergisi.com.tr/toplum_politika/086871_09.08.2005.

ցույց վկայակոչում են Սերի պայմանագիրը, Վ. Վիլսոնի իրավաբար վճիռն ու Եվրոպայի կողմից Օսմանյան թուրքիայում բարեփոխումների պարտադրանքը¹⁴: 2005 թ. Անթալիայի մտավորականության օջախում ելույթով հանդես եկած Իբրահիմ Դեմիրը, անդրադառնալով թուրք-ամերիկյան հարաբերություններին, նշել է, որ «ԱՄՆ-ը թուրքիայի գլխին խաղեր է խաղում, իսկ Արևմուտքն ընդհանրապես չի հրաժարվել Սերի պայմանագրից»¹⁵:

Նման հայտարարություններ են արվել նաև թուրք քաղաքական գործիչների կողմից, որոնք մեղադրել են արևմտյան երկրներին քրդական ահաբեկչությանն աջակցելու համար: Մասնավորապես, 2008 թ. փետրվարին ունեցած իր ելույթներից մեկում «Բրջանկություն» (*Saadet*) խլամփստական կուսակցության առաջնորդ Ռ. Քուրբանը, մեկնաբանելով ՔԲԿ-ի վերելքն ու նրանց ձեռքում հայտնվող սպառազինության առկայությունը, նշել է, որ ԱՄՆ-ը, ԵՄ-ն և Իսրայելը տարիներ շարունակ աջակցել են քրդական այդ կազմակերպությանը¹⁶: Այս համատեքստում անմասն չի մնացել նաև վարչապետ Ռ. Թ. Էրդողանը, որը 2011 թ. հոկտեմբերին առանց հստակ մատնանշելու մեղադրանք էր հնչեցրել թուրքիայի տարածքում գործող գերմանական բարեգործական հիմնադրամների հասցեին՝ նշելով, որ դրանք նաև ոչ ուղղակիորեն ֆինանսավորում են ՔԲԿ-ին¹⁷: Պաշտոնական մեկնարան հանրապետի մեղադրել է եվրոպական երկրներին՝ իրենց տարածքներում ՔԲԿ-ի անդամների ազատ տեղաշարժ

ու նրանց աջակցելու նպատակով տարբեր հիմնադրամների գոյությունը թույլատրելու համար¹⁸: Թուրքական իշխանությունների կողմից տարիներ շարունակ նման մեղադրանքներ են հնչել ինչպես եվրոպական մի շարք երկրների, այնպես էլ թուրքիայի հարևանների հասցեին՝ առանց հստակ փաստերի ու հիմնավորումների: Հատկապես նման մեղադրանքներն ուղղվում էին այն եվրոպական երկրներին, որոնցում կան քրդական համայնքներ: Եվրոպական երկրների, տարբեր կազմակերպությունների կողմից թուրքիայում քրդական բնակչության իրավունքների վերաբերյալ ցանկացած առաջարկ, քրդական հիմնախնդրի բարձրաձայնում հատկապես ազգայնական շրջանակների կողմից դիտվում է որպես ոտնձգություն թուրքիայի անվտանգությանն ու տարածքային ամբողջականությանն նկատմամբ՝ համարելով դա որպես «զմակ Եվրոպայի ձեռքին» թուրքիան տարածքային մասնատման ենթարկելու համար»:

Թուրքական քաղաքական որոշ շրջանակների պատկերացումներով, երբ մույնիսկ ԵՄ-ի կողմից բարձրացվում էր երկրում որոշ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը կամ ընդունվում որևէ փաստաթուղթ, որը չէր համընկնում այդ երկրի քաղաքական շահերի հետ, ասոցացվում ու համեմատվում էր Սերի պայմանագրի հետ: Օրինակ՝ 2000 թ. ԵՄ-ին թուրքիայի անդամակցության գործակցության փաստաթղթի քննադատության ժամանակ թուրքական խորհրդարանի խոսման, «Ազգայնական շարժում» (MHP) կուսակցության ներկայացուցիչ Օմեր Իզգին այդ փաստաթուղթը նմանեցրել էր Սերի պայմանագրին՝ նշելով, որ «Եթե Սերի պայմանագրում անգամ միայն Հաքքյարին ու Հյուսիսային Իրաքն էին դիտվում որպես Թուրքիստան, ապա այս փաստաթուղթով՝ ողջ Հարավ-արևելյան

¹⁴ ABD Türkiye'yi bölmeye hazırlanıyor, <http://www.turksolu.org/35/dura35.htm>, 21.07.2003.

¹⁵ 'Bati'nin gönüllü hala Sevr'de',

<http://www.aksam.com.tr/arsiv/aksam/2005/02/23/akdeniz/akdeniz2.html>.

¹⁶ Batılı ülkeler PKK'ya destek veriyor, 25 Şubat 2008,

<http://www.saadet.org.tr/haber/batili-ulkeler-pkky-a-destek-veriyor>.

¹⁷ Erdoğan targets two German funds in PKK support remarks, report says,

http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&newsId=258695&link=258695.

¹⁸ Erdogan: German charity helps PKK,

http://www.upi.com/Top_News/Special/2011/10/04/Erdogan-German-charity-helps-PKK/UPI-65411317724740/.

Անատոլիան»¹⁹: 2004 թ., երբ դեռ չէին սկսվել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հիմնական բանակցությունները, Թուրքիայի «Հանրապետություն» (*Cumhuriyet*) համալսարանի ռեկտոր Մ. Բաքըըը հայտարարել է, որ ԵՄ-ին անդամակցության վերջին քայլերում Թուրքիային ներկայացվում են պահանջներ, որոնք վնասակար են երկրի տարածքային ամբողջականության ու ազգային պետության տեսանկյունից, այլ խոսքով՝ «Թուրքիային պարտադրվում է մի նոր Սևր»²⁰: Իսկ «Նրջանկություն» կուսակցության նախագահի տեղակալ Շ. Քազան նույն թվականին իր ասուլիսներից մեկում նշել է, որ Սևրը «հարություն» է առնում, ԵՄ-ն Թուրքիային տանում է դեպի Սևրի պայմանագիր և ոչ մի դեպքում այն Թուրքիային չի ընդունելու իր կազմի մեջ, քանի որ ԵՄ-ն գուտ քրիստոնեական ակոսք է, իսկ Թուրքիան՝ մահնդեղական երկիր²¹: Նույն կուսակցության մեկ այլ ներկայացուցիչ, քննադատելով Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) գործունեությունը և Թուրքիայի պետական պարտքի ավելացումը, նշում էր, թե որոշ հայտնի ուժեր՝ հիմնականում ԱՄՆ-ն ու ԵՄ-ն, ցանկանում են կյանքի կոչել Սևրը՝ տարածքային մասնատման ենթարկելով Թուրքիան: Ըստ նրա՝ դա արվում է ոչ միայն Թուրքիայի, այլ նաև ողջ մուսուլմանական երկրների նկատմամբ²²: Լինելով իսլամամետ քաղաքական ուժի ներկայացուցիչներ, իհարկե, հիմնական շեշտադրումը կատարում են կրոնական գործոնի վրա՝ ցույց տալով քրիստոնեության ու իսլամի հակադրությունը, որը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հիմնական խոչընդոտն են համարում: Թուրքական հասարակական-քաղաքական տարբեր շրջանակներում, որտեղ

¹⁹ Sevr'den beter,

<http://www.aksam.com.tr/arsiv/aksam/2000/11/10/guncel/guncel1.html>.

²⁰ CÜ Senatosu: Sevr dayatılıyor, <http://www.haberpan.com/cu-senatosu-sevr-dayatiliyor-haber/>, 16.12.2004.

²¹ Şevket Kazan'a göre Sevr diriliyor, <http://www.haber7.com>, 18.12.2004.

²² SP'li Karamollaoğlu'ndan Sevr uyarısı, <http://www.haberpan.com/mhp-referandumda-sevri-de-gorduk/>, 22.05.2005.

կրոնական գործոնի ազդեցությունը մեծ է, ԵՄ-Թուրքիա հարաբերություններում առկա գործընթացը դիտարկվում է հենց այդ տեսանկյունից:

2005 թ. փետրվարին Ստրասբուրգում Թուրքիա-ԵՄ համատեղ խորհրդարանական հանձնաժողովի նիստի ժամանակ ֆրանսիացի պատգամավոր Ժակ Թյուրոնի այն հայտարարությունը, որ Թուրքիան պետք է ճանաչի Սևրի պայմանագիրը, նոր քննարկումների առիթ հանդիսացավ Թուրքիայում: Թուրքական «Cumhuriyet» թերթում սկսեցին հայտնվել դրա մեկնաբանություններն ու Սևրի պայմանագրի քննարկումները: Մասնավորապես՝ «Cumhuriyet»-ի 2005 թ. մարտի 23-ի համարում հրատարակված Մ. Կելիեդոլուի «Կրկին քոցակալող Սևր» (թուրք. *Yeniden Ateşlenen Sevr*) վերտառությամբ հոդվածը, որտեղ անդրադարձ է կատարվում Թուրքիայում «Սևրի սինդրոմ»-ի առկայությանը²³: Հոդվածագիրը նույն թերթի օգոստոսի 10-ի համարում նշում է, որ չնայած Սևրի պայմանագրի ստորագրումից 85 տարի է անցել, սակայն նրա տեղը Թուրքիայի նկատմամբ Արևմուտքի տեսչականի մեջ դեռևս պահպանվում է²⁴:

Նշենք, որ դեռևս 1987 թ. Եվրախորհրդարանի կողմից ընդունված «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը²⁵ լուրջ իրարանցում առաջացրեց Թուրքիայի քաղաքական համակարգում: Նույնիսկ իշխանական շրջանակների կողմից սուր հակաարևմտյան ելույթներ ու քննարկումներ եղան: Թուրքիայի նախագահ Քենան Էվրենն այդ բանաձևն ընդունեց որպես «դավադրություն թուրքական պետության դեմ»: Սըվասում (Մեքաստիա) արված իր հայտարարությամբ նա մեղադրեց

²³ Velidedeoglu Meriç, Yeniden Ateşlenen Sevr..., *Cumhuriyet*, 25.03.2005.

²⁴ Velidedeoglu Meriç, 85 yıldır dayatılmaya çalışılan anlaşma, *Cumhuriyet*, 10.08.2005.

²⁵ Resolution on a political solution to the Armenian question,

http://www.europarl.europa.eu/iniccoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf.

Եվրոպային՝ նշելով, որ «արտաքին ուժերի բոլոր սպասելիքները Թուրքիան ոչնչացնելը, բաժանելն ու մասնատելն է, և այդ մտադրությունները դարելով են շարունակվել և հիմա էլ շարունակվում են»²⁶։ Մեղադրելով Եվրոպային և ՆԱՏՕ-ին դավաճանության մեջ՝ նա հետադարձ կարգի ձևով նշել է, թե «այդ որոշումից հետո այլ պահանջներ են լինելու, մի որոշ ժամանակ հետո ասելու են՝ ժամանակին Արևելյան շրջաններում Հայաստան է եղել, այդ տարածքները հայերին վերադարձրեք»։ Ներքուրբական քննարկումները բավականին սուր բնույթ էին կրում, և առաջին անգամ Թուրքիայի նախագահի կողմից հանրության առջև հարցադրում արվեց ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցության վերանայման մասին։ Հ. Էվրենն իր ելույթում հատկապես ՆԱՏՕ-ի հասցեին մնան կերպ է արտահայտվել. «Ցավալի է, որ սեփական տարածքները պահպանելու համար դաշինքում համախմբվածները ջանում են Թուրքիայի տարածքներից վերցնել և ուրիշներին հանձնել։ Ինչ դաշինք է դա նշանակում և արդյոք մենք դրա համար ենք անդամակցել ՆԱՏՕ-ին։ Անգամ Վարշավայի պակտից մենք մնան պահանջ չենք ստացել... սակայն մեր դաշնակցից ենք ստանում։ Նման դաշնակցի չի լինում»²⁷։

Նախկին դիվանագետ և 1990-ական թթ. սկզբին պետնախարարի պաշտոնն զբաղեցրած Ֆանրան Ինանը թուրքական «Cumhuriyet» թերթին տված հարցազրույցում, մեկնաբանելով Թուրքիայի ԵՄ անդամակցության քաղաքականությունն ու եվրոպական դիրքորոշումն այդ հարցում, նկատել է, որ «Թուրքիայի համար երկու կարևոր իրավական փաստաթղթեր կան։ Մեկը Լոզանի պայմանագիրն է, որը վերաբերում է Թուրքիայի Հանրապետության ստեղծմանը, մյուսը՝ Մոնտրոյի պայմանա-

գիրը, որը լրացնում է նախորդին։ Ներկայումս դրանց փոփոխության հարցը գտնվում է Եվրոպայի օրակարգում։ Փոխելով Մոնտրոյի պայմանագիրը՝ կսահմանափակվի Թուրքիայի ազդեցությունը նեղուցներում, իսկ Լոզանի փոփոխության միջոցով Թուրքիան կմասնատվի էքսիկ բաժանման սկզբունքով՝ դառնալով դաշնային պետություն։ Այսօր Մերը կամաց-կամաց կիրառության է դրված, և դա է հենց Եվրոպայի նպատակը»²⁸։

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման շրջանակներում Թուրքիայում ընթացող քննարկումներում հաճախակի կատարվում էին հարցադրումներ, որոնք վերաբերում էին Թուրքիայի տարածքային ամբողջականության խնդիրներին, Հայաստանի կողմից տարածքային պահանջների ներկայացման հնարավորությանը կամ Թուրքիայի կողմից Հայաստանին դրանից պաշտոնապես հրաժարվելու պայման ներկայացնելու անհրաժեշտությանը։ Շատ հաճախ Թուրքիայում հայկական թեմատիկայի շատ հարցեր առաջին հերթին մեկնաբանվում են «Սևրաֆորիայի» տեսանկյունից՝ առաջին պլան մղելով տարածքային խնդիրներն ու Թուրքիայի մարտահրավերները։ Հենց այդ համատեքստում կարելի է դիտարկել թուրքական «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի միության» ղեկավար Սավաշ Էգիլմեզի այն հայտարարությունը, որ «Հայերը փորձում են մշտապես գիտական, քաղաքական ու հասարակական օրակարգում պահել Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջների հարցը, Անատոլիայի արևելյան շրջաններից մինչև Ադանա ձգվող տարածքներին տիրանալ, և այդ իսկ ուղղությամբ սկսել են Թուրքիայի քաղաքացիություն ձեռք բերելու համար միջոցներ ձեռնարկել»։ Ըստ նրա՝ դա Հայաստանի ու Սփյուռքի ռազմավարության առանցքային կետերից մեկն է, որի համար որպես միջոց օգտագործվում է նաև

²⁶ Laçiner Sedat, Türkiye-Avrupa İlişkilerinde Ermeni Sorunun Etkisi (1980ler), 12 Haziran 2009, <http://www.usakgundem.com/ders-notu/4i/%C3%BCrkiye-avrupa-%C4%B0li-%C5%9Fkilerinde-ermeni-sorum-etkisi-1980ler-.html>.

²⁷ Նույն տեղում։

²⁸ Sanoğlu Bülent, "Sevr taksit taksit uygulamaya sokuldu", *Cumhuriyet*, 14.12.2004.

ՔԲԿ-ն²⁹; 2009 թ. հոկտեմբերի 22-ին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման արձանագրությունները բուրբական խորհրդարանում ներկայացնելու ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Ա. Գալուբօղլուն անդրադարձել է նաև տարածքային պահանջների խնդրին՝ նշելով, որ «Հայաստանը կամ էլ որևէ այլ երկիր չի հանդգնի տարածքային կամ հողային պահանջներ ներկայացնել Թուրքիային»³⁰: Տարածքային պահանջատիրության հարցը քննարկման առարկա է դարձել բարձրագույն քաղաքական հարբությունում, ինչի հետ կապված էլ խորհրդարանում նման հայտարարություն է հնչել արտգործնախարարի կողմից: Իրականում թուրքական քաղաքական որոշ շրջանակներում տարածքային պահանջատիրության հարցի քննարկումները մեծամասամբ կապված են վախի սինդրոմի հետ, որն ամփոփվում է ընդհանրապես թուրքական պետության դեմ իրագործվող շարունակական դավադրությունների հոգեբանական բարդույթի մեջ:

Թուրքիայի բննալական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Թանսել Չոլաշանը 2011 թ. ապրիլին Թուրքիայի Բիլեջիք նահանգում կազմակերպված մի միջոցառման ժամանակ իր ելույթում թուրքական հանրությանը կոչ էր արել պատրաստվել «երկրորդ ազատագրական պատերազմին»՝ երկիրը վերահաս վտանգից՝ տարածքային մասնատումից փրկելու համար: Ջուզահեռներ անցկացնելով պատմական անցյալի հետ՝ ներկա ժամանակաշրջանը նա նմանեցրել էր Օսմանյան կայսրության անկման ժամանակաշրջանի հետ՝ ահազանգելով թուրքական պետության մասնատման ու տրոհման մասին: Ըստ նրա՝ Թուրքիան կանգնած է Հայկական հարցի ու քրդական խնդրի առաջ, և թուրքական պետությունը գնում է դեպի տարած-

քային մասնատում, ուստի պետք է սկսել նոր ազատագրական պատերազմ³¹: 2011թ. հուլիսին իր հրապարակած ուղերձում Թուրքիայի ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության (CHP) պատգամավոր Մեհմեթ Սիյամ Քեսիմօղլուն նշում է, որ Թուրքիան ներկայում էլ կանգնած է մասնատման վտանգին դեմ հանդիման: Ըստ նրա՝ «թուրք ազգի մահվան հրամանագիր հանդիսացող Սերի պայմանագիրը պատմության աղբամանը նետելուց հետո», Թուրքիայի անկախությունն ու սահմանները ճանաչած Լոզանի պայմանագրի ստորագրումից 88 տարի հետո էլ Թուրքիան կանգնած է մասնատման մարտահրավերի առջև, որը պարզորոշ կերպով ի հայտ է գալիս իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (AKP) բարեփոխումների անվան տակ իրականացվող քաղաքականությունից, ԲԻՎԻ-ի առաջնորդ Օջալանի հետ տարվող բանակցություններից, աճող ահաբեկչությունից ու քրդական ժողովրդավարական ինքնավարության հայտարարություններից³²:

Փաստորեն, «Սերի սինդրոմ»-ի դրսևորումներն էականորեն առկա են քաղաքական ու գիտական շրջանակներում, և չնայած նման ընկալումներն առավելապես տարածված են ազգայնական ուղղվածության քաղաքական ու գիտական շրջանակներում, այդուհանդերձ, Թուրքիայի համար զգալի մի շարք հիմնախնդիրների հետ կապված՝ նման մոտեցումներն ավելի ընդգրկում են դառնում՝ ներառելով տարբեր քաղաքական հոսանքների պատկանող շրջանակների ու մասնագետների: Թուրքիայում հայկական բննատիկայի շատ հարցեր, ինչպես օրինակ՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, պահանջատիրությունը, շատ հաճախ մեկնաբանվում են «Սևրաֆորիայի» տեսակետումից՝ առաջին պլան մղելով

²⁹ Ermeniler Anadolu'ya dönüş planı yapıyor, <http://haber.mynet.com/detay/guncel/ermeniler-anadoluya-donus-planı-yapıyor/550547>.

³⁰ Kimse Türkiye'den toprak talep etmeye cüret edemez, *Star*, 22.10.2009.

³¹ Çolaşan'dan 'savasa hazırlanm' çağrısı, <http://www.haber7.com/haber/20110404/Colasandan-savasa-hazirlanin-cagrisi.php>.

³² 88'inci yilda bölünme tehlikesi, 25.07.2011, <http://www.hurriyet.com.tr/gundem/18330649.asp?gid=386>.

արտաքին ուժերի կողմից Թուրքիայի նկատմամբ դավադրությունների փաստարկումները: «Սերաֆորիա»-ն որպես արմատավորված հոգեբանական բարդույթ, հաճախ դառնում է քաղաքականություն՝ ուրվագծելով քաղաքական որոշ շրջանակների թե իրական համոզմունքները, և թե դրա շուրջ մանիպուլացիաները:

Սերի սինդրոմի դրսևորումները զինվորականության շրջանում

Ազգային անվտանգություն հասկացությունը Թուրքիայում ավանդաբար վերաբերում էր պետական ինքնավարության ու տարածքային ամբողջականության ու ազգային միասնության վտանգներին դիմակայելուն, գաղափարային արժեքամակարգի պահպանմանը: Անվտանգությունը Թուրքիայում սահմանվել է ռազմական դիրքերից և ունեցել է «ռազմակենտրոն» մոտեցում: Զինվորական էլիտայի կողմից էր սահմանվում անվտանգությունը և նրա կողմից էր իրականացվում անվտանգության քաղաքականությունը, իսկ քաղաքացիական իշխանություններն ուղղակի ստիպված էին ընդունել զինվորականության հաստատած «օրակարգը»: Իսկ «Սերի սինդրոմի»՝ որպես անվտանգության դիսկուրսի բաղադրիչի առկայությունն ու շրջանառությունը պայմանավորված էր մեծամասամբ նաև զինվորական իշխանությունների «օրակարգային սահմանումով»: Ըստ թուրք հետազոտող Փընար Բիլգինի՝ թուրքական զինվորականության անվտանգության ընկալումներն ավանդաբար հիմնվել են «տարածքների կորստի ու երկրի լքվածության վախի» վրա, իսկ նման ընկալումները ավելի ցայտուն դարձան հատկապես Սադը պատերազմի ավարտից հետո³³:

1990-ական թթ. Թուրքիայի շուրջ ընթացող զարգացումներն ու իրավիճակը մասնատման ու տարածքային տրոհման ավելի խորը մտավախություն ի հայտ բերեցին: Թուրքական իշխանությունների շրջանում արմատավորվեց այն ընկալումը, որ թե Արևմուտքի երկրները և թե Թուրքիայի անմիջական հարևանները քայլեր են ձեռնարկում տարածքային մասնատման ու Սերի պայմանագիրը կրկին օրակարգ բերելու ուղղությամբ, և

³³ Bilgin Pinar, Turkey's changing security discourses: The challenge of globalisation, *European Journal of Political Research* 44, 2005, p. 185.

այդ համատեքստում սկսեցին համապատասխան ելույթներ ու հայտարարություններ հնչել: Նման մոտեցումները լայնորեն սկսեցին շրջանառվել մաս ժամանակի մամուլի էջերում ու հասարակական բննարկումներում³⁴:

ԻՍՀՄ-ի փլուզումն ու Սառը պատերազմի առաջ բերած աշխարհաքաղաքական զարգացումները Թուրքիայում մարտահրավերների ընկալման արմատական փոփոխություններ առաջացրեցին: Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի ռազմաքաղաքական շրջանակները կանգնեցին արտաքին քաղաքականության, անվտանգության ու պաշտպանական քաղաքականության ոլորտում իրենց ռազմավարության վերանայման ու հստակեցման անհրաժեշտության առջև: Սառը պատերազմի ավարտով սկսված աշխարհաքաղաքական փոփոխություններն ու զարգացումները ստիպեցին Թուրքիային առավել զգուշորեն և հետևողականորեն հստակեցնել միջազգային ու տարածաշրջանային, անվտանգության ու պաշտպանական քաղաքականության գերակայություններն ու նոր մարտահրավերները: Փոխվեցին Թուրքիայի անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները³⁵: Թուրքիայի քաղաքական ու զինվորական շրջանակների մոտ մտավախություն կար, որ Սառը պատերազմի ավարտով Թուրքիան կկորցնի իր ռազմավարական նշանակությունը Արևմուտքի ու ԱՄՆ-ի համար և կհայտնվի տարածաշրջանային մեկուսացման վտանգի առջև: Անհանգստությունն այն էր, որ Թուրքիան իր անմիջական հարևանների կողմից կարող է ընդունվել կասկածամտությամբ կամ նույնիսկ թշնամաբար: Տարածաշրջանից բխող մարտահրավերների ու ռիսկերի գնահատումներով ու ընթերցումներով հանդերձ, Թուրքիայի ՉՈՒԳՇ-ի համար որպես երկրի տարածքային ամբողջականության

պահպանման, անվտանգության առաջադրանք էր դիտվում երկրի բազմաճակատ պաշտպանությունը³⁶: Սառը պատերազմի ավարտից հետո դադարեցրել լինել երկու ուժային համակարգերի միջև «ռազմավարական պատմեջ» Թուրքիան փոխարենն իր սահմանի անմիջական հարևանությամբ «տաքացվ լարվածության օջախներ և թեժ կետեր, որոնք դիտարկվում էին այդ երկրի անվտանգությանն ուղղված մարտահրավերները»: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև 1990-ական թթ. վերջը, Թուրքիայում դեռևս գերիշխում էր ավանդական «տարածքների կորստի ու Թուրքիայի մերժվածության վախը», ինչը հանրապետական Թուրքիայի անվտանգության դիսկուրսի անբաժանելի մասն էր կազմում³⁷: 1990-ական թթ. թուրք ռազմական պատասխանատուները Ուսաստանը, Հունաստանը, Իրաքը, Իրանը և Սիրիան դիտում էին որպես Թուրքիայի հիմնական սպառնալիքներ՝ ելնելով այդ երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և թուրքական սահմանին ռազմական ուժեր կենտրոնացնելու նրանց ռազմական կարողություններից³⁸: Ավելի վաղ Թուրքիայի արտգործնախարարության քարտուղարի տեղակալ և Վաշինգտոնում այդ երկրի դեսպան Շյուքրյուլ Էլբեքաղն, ամենայն հավանականությամբ, արտահայտելով զինվորականության մոտեցումները, Թուրքիայի հարևաններից Հունաստանը և Սիրիան դասում էր որպես սպառնալիք ներկայացնող երկրներ, որոնք տարածքային հավակնություններ ունեն Թուրքիայից: ՋԵԿ-ի ակտիվությունը, Հունաստանի ու Սիրիայի կողմից դրան ցուցաբերվող աջակցությունը, Օսմանյան Թուրքիայի մասնատման պատմական ժառանգությունը էլ ավելի խորացրեցին տարածքների կորստի վախը թուրքական զինվորականության շրջանում,

³⁴ Türk Dış Politikası: Kurtuluş Şavaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Cilt 2 (1980-2001), Ed. B. Oran, 2001, s. 235-236.

³⁵ Larrabee F. Stephen, Turkey as a US Security Partner, RAND Corporation 2008, p. 3.

³⁶ Hickok Robert Michael, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, The Eurasian Politician-Issue 3 (February 2001).

³⁷ Bilgin Pinar, նշվ. աշխ., էջ 185.

³⁸ Hickok Robert Michael, նշվ. աշխ.:

որոնք տարբեր երկրների և հատկապես Արևմուտքի հետ իրենց հարաբերությունները դիտարկում էին «Սևրի սինդրոմ»-ի պրիզմայով: Բարձրագույն զինվորականությունը տարբեր սցիպակական հակամարտությունները դիտում էր արտաքին մարտահրավերների դիտանկյունից³⁹:

Չնայած հետագայում Թուրքիան քայլեր ձեռնարկեց իր հարևանների հետ հարաբերությունների նորմալացման ուղղությամբ, ինչպես օրինակ՝ Հունաստանի, Սիրիայի, 1990-ական թթ. աշխարհաքաղաքական դիմակայության մեջ գտնվող Ռուսաստանի հետ, այդուհանդերձ, Թուրքիայում թե քաղաքական, թե ռազմական ու հասարակական տարբեր շրջանակներ այդ երկրները դեռևս համարում են Թուրքիայի անվտանգության համար «ոչխկային երկրներ»: Թուրքիան իր հարևան տարածաշրջաններում տեղի ունեցող զարգացումները առաջին հերթին ընկալում է իր նկատմամբ հնարավոր մարտահրավերների դիտանկյունից:

Չինվորական շրջանակներում ևս առկա են արտաքին ուժերի՝ բուրբակյան պետությունը մասնատելու մտադրության ու նախաձեռնությունների մասին քննարկումները: Այս համատեքստում խիստ բնորոշ էին 2007 թ. Թուրքիայի ՋՌՌ-ի գլխավոր շտաբի նախկին պետ (1990-1994 թթ.) Դոդան Գյուրեշի այն խոսքերը, թե «Թուրքիայի համար առկա է մասնատման վտանգը, ինչը ցանկանում են թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Եվրամիությունը: Նրանց նպատակը Թուրքիայի փոքրացումն է»⁴⁰: 2006 թ. ՋՌՌ-ի գլխավոր շտաբի պետի պաշտոնն ստանձնելու կապակցությամբ իր ունեցած ելույթում Յ. Բյույուքանը, անդրադառնա-

լով Թուրքիայի նկատմամբ առկա մարտահրավերներին ու հիմնախնդիրներին, նշել էր, որ «չնայած փաստարկվում է, որ Թուրքիան ստիպված է լինելու բախվել Սևրի պայմանագրին, և հնարավոր է որոշ շրջանակներ ունեն նման հույսեր ու անկեղծիքներ, աշխարհում չկա և չի էլ կարող լինել մի այնպիսի ուժ, որը Թուրքիային կանգնեցնի մի նոր Սևրի առաջ»⁴¹: Գրեթե նմանատիպ արտահայտություններ էլ հնչեցվել էին 2007 թ. փետրվարին Վաշինգտոն կատարած նրա այցի ընթացքում:

Մեկ այլ բուրբ զինվորական, պաշտոնաթող գեներալ Հուրշիթ Թոլունը 2004 թ. հրատարակված իր «*Առաջին աշխարհամարտի տարիների քննարկում մասնատման պայմանագրերն ու դեպի Սևր գնացող մասնապարիզ*» գրքում նշում է, որ Թուրքիայի անկախության համար մղված պայքարում պարտություն կրելուց հետո եվրոպական պետությունների կողմից Սևրի պայմանագիրը ժամանակավորապես դրվել է «գրապահարան»: Նրա համոզմամբ, ինչպես անցյալում է եղել, այնպես էլ ներկայում և ապագայում Թուրքիան ունենալու է թշնամիներ, որոնք հարմար առիթը գտնելով՝ Սևրի պայմանագիրը նորից երևան են հանելու: «Այսինքն՝ Սևրը հարմարեցվում է մեր օրերին»⁴²: 2007 թ. Սըվասի (Մերաստիա) «Ջումհուրիեթ» համալսարանում «*21-րդ դարի սկզբին պաշարված Թուրքիա*» (բուրբ. 21 Yüzyılın Başlarında Kuşatılmış Türkiye) խորագրով համաժողովի ժամանակ իր ելույթում Հ. Թոլունը պնդել է, որ Թուրքիան գտնվում է ճգնաժամային իրավիճակում, և այդ համատեքստում Թուրքիա-

³⁹ Sandrin Paula, Turkish Foreign Policy after the End of Cold War: From Securitising to Desecuritising Actor, <http://www2.lse.ac.uk/europeanInstitute/research/ContemporaryTurkishStudies/Paper1%20PS.pdf>.

⁴⁰ Güres: Hakkari bir gün Barzani'nin olursa, <http://www.haber7.com>, 04.11.2007: ABD-AB, Türkiye'nin bölünmesini istiyor, *Milliyet*, 04.11.2007.

⁴¹ Büyükanıt görevi devraldı, *Sabah*, 28.08.2006, Uslu Emrullah, Aytaç Önder, War of Paradigms: The PKK, Europe, and Turkey, Understanding and responding to the terrorism phenomenon: a multi-dimensional perspective, NATO Science for Peace and Security Series E: Human and Societal Dynamics-vol. 21, 2007, IOS press, p.131.

⁴² İnsef Ahmet, Milli hassasiyet tercümanları, *Radikal*, 19.02.2006. Գիրքը հրատարակվել է իր իսկ դոկտորական առնվազնության հիման վրա: Հ. Թոլունը 2001-2006 թթ. ժամանակահատվածում զբաղեցրել է ցամաքային ուժերի Էպիսան և Առաջին բանակների հրամանատարի պաշտոնները, 2008 թ. ձերբակալվել է «Էրգենեկում» գործով:

յի փլուզման համար արտաքին ուժերը մրցակցում են միմյանց հետ: «Այսօր Թուրքիան գտնվում է Լոզանը վերանայել և Սևըր վերակենդանացնել ցանկացող արտաքին ուժերի քաղաքական, տնտեսական ու հոգեբանական հարձակումների տակ: Ավելի պարզ ասած՝ երկրորդ Սևրն է ներկայացվում»⁴³:

Մի շարք թուրք բարձրաստիճան զինվորականների կրապարակումներում Թուրքիայի նկատմամբ առկա սպառնալիքները ամբողջացվում էին տարածքային մասնատման ու տարածքների կորստի վախի մեջ: Թուրք գեներալ Ն. Շենօղլուն համարում էր, որ Թուրքիան աշխարհում ունի ամենաշատ արտաքին թշնամիները, որոնց ցանկությունը Թուրքիայի նկատմամբ «լրեծխնդիր լինելն է», իսկ գեներալ Գ. Բայազիտը (1992-1995 թթ. Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար) նշում էր, որ արտաքին ուժերը տարածաշրջանում ուժեղ ու հզոր Թուրքիայի գոյությունը շատ դեպքերում ընկալում են որպես մարտահրավեր և որդեգրել են քրոական պետություն ստեղծելու գաղտնի քաղաքականություն: Այս համատեքստում առավել կտրուկ է արտահայտվել թոշակի անցած գեներալ Ս. Իլիանը, ըստ որի, Արևմուտքը ցանկանում է հասնել նրան, «փնչը չհաջողվեց Առաջին աշխարհամարտում, այսինքն՝ մասնատել Թուրքիան»⁴⁴:

Բուրսայում 2011 թ. ապրիլին կազմակերպված համաժողովի ժամանակ պաշտոնաթող գնդապետ Էրդալ Մարդոչեբը նշել է, որ Թուրքիայի նկատմամբ դեռևս շարունակվում են արտաքին ուժերի «խնայերիալիստական խաղերը»՝ երկիրը տարածքային մասնատման հասցնելու ուղղությամբ: Մեղադրելով արևմտյան «խնայերիալիստական ճամբարի խաչակիրներին» ու հատկապես Ֆրանսիային՝ Անատոլիան Թուրքիայի ձեռքից

խլելու մտադրության մեջ՝ թուրք զինվորականը նշել է, որ հազար տարի շարունակ դա նրանց չի հաջողվել ու հիմա փորձում են գումարով հասնել արդյունքի և նրանց միակ նպատակն Անատոլիան վերցնելն է: «Արտաքին այդ ուժերը 90 տարի անց դարձյալ Հայաստան ու Քուրդիստան անդեմելու առասպելներն են վերհանում: Չենքով Անատոլիան վերցնել չկարողացողները հիմա էլ օգտագործում են ահաբեկչությունը մեր դեմ»⁴⁵:

Թուրքական զինվորական որոշ շրջանակների ընկալմամբ՝ Սևրի պայմանագիրը հատուկ հաղթաբուրդ է, որն արտաքին ուժերն օգտագործում են Թուրքիայից տարբեր զիջումներ ստանալու համար: Բացի այդ, թուրքական զինվորականության կողմից պարբերաբար երկրի տարածքային ամբողջականության ուղղված սպառնալիքների հիշատակումները, դրանք թուրք հանրության «սեփականությունը դարձնելը» հնարավորություն էին տալիս երկրի բարձրագույն հրամանատարությանը, միշտ զգուշացնելով առկա մարտահրավերների մասին, իրենց կալում դերն ու ազդեցությունը պահպանել հասարակական-քաղաքական գործընթացներում: Կարելի է ասել, որ զինվորականությունը մաս շահագրգռված էր երկրի ներսում մնալ ընկալումների սերմանմամբ, որով լուծում էր «արտաքին թշնամուն դիմագրավելու նպատակով ազգային միասնություն ասպեկտի իր խնդիրը»: Թուրք հետազոտող Զ. Քիրիշչիի համաձայն՝ «թուրքական զինվորականությունը վճռական դեր ունի Սևրաֆոթիայի հավերժացման գործում: Թուրքական ազգային անվտանգության մշակույթը, որի վրա մեծ է եղել զինվորականության ազդեցությունը, ընդգծում է «Սևրաֆոթիայի» վրա հիմնված

⁴³ -21 Yüzyılın Başlarında Kuşatılmış Türkiye” konferansı, <http://www.bizimsivas.net/modules.php?name=News&file=print&sid=3470>, 14.03.2007.

⁴⁴ Bilgin P., նշվ. աշխ., 183-185.

⁴⁵ Emekli Albay Sarızeybek: Kardeş Kavgasından Uzak Durun, <http://www.sondakika.com/haber-emekli-albay-sarizeybek-kardes-kavgasindan-uzak-2669686/>.

մտածելակերպն ու վերլուծությունը»⁴⁶: ԱՄՆ-ի Միչիգանի համալսարանից ազգությամբ բուրբ պրոֆեսոր Ֆ. Գյուչեքն, ուսումնափորձելով «Սերի սինդրոմ»-ի առկայությունն ու կենսունակության պատճառները, նկատում է, որ «համընդհանուր էլիտան ու առաջին հերթին զինվորականները ազգային պետության ստեղծման նպատակով զարգացրեցին այդ գաղափարը, իսկ հետագայում այն վերափոխեցին ազգային անվտանգության քաղաքականի»⁴⁷:

Գիտարկելով զինվորականության շրջանում «Սերի սինդրոմ»-ի դրսևորումները՝ պետք է նկատել, որ այն ինչ-որ կերպ կապվում է նաև Թուրքիայի ԵՄ անդամակցության գործընթացին: Մասնավորապես՝ որպես անդամակցության նախապայման ԵՄ-ի կողմից դրված բարեփոխումների անցկացման պահանջները թուրքական զինվորականության կողմից միանշանակ չէին ընդունվում, և բարձրագույն սպայակազմը ԵՄ-ի առաջադրած պայմանները սկսեց դիտարկել որպես մարտահրավեր՝ երկրի գաղափարական հիմքին ու ինքնությունը: Շատ անգամ զինվորականությունը հայտարարել է, որ ԵՄ-ի կողմից մարդու և փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ առաջադրվող պայմանները խաթարում են երկրի անբողջականությունը⁴⁸: Թուրքիայի զինվորական վերնախավը բավական ցավազին էր մտտենում երկրում իրականացվող բարեփոխումների այնպիսի ոլորտներին, որոնք վերաբերում էին փոքրամասնություններին, գաղափարական դաշտին և այլն: 2006 թ. Թուրքիայի ռազմածովային ուժերի հրամանատար Յեներ Քարահանդը-

յուն հայտարարել է, որ «երկրի արդիականացման գործում հատուկ դեր կատարող թուրքական զինված ուժերը երբեք զիջումների չեն գնա ԵՄ-ին»⁴⁹: Նույն թվականի իր ելույթներից մեկում ցամաքային զորքերի հրամանատար Իլքեր Բաշչուրը նշել է, որ «երկրում լարված իրավիճակ ստեղծելու արտաքին ու ներքին սպառնալիքներ ու նախագծեր գոյություն ունեն»⁵⁰: Այս համատեքստում հատկանշական էր 2008 թ. հունիսին թուրքական «Թարաֆ» թերթի կողմից հրատարակված հոդվածը Թուրքիայի ԶՈՒ-ի գլխավոր շտաբի գաղտնի պլանի վերաբերյալ, ըստ որի՝ մշակվել էր գործողությունների պլան բանակի կողմից հասարակական ու քաղաքական կյանքում նախաձեռնությունների վերաբերյալ: Դրա նպատակը բանակի հրամանատարության կողմից իր համար զգայուն մի շարք հիմնախնդիրների նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորումն ու ուղղորդումն էր⁵¹: Ըստ որոշ աղբյուրների՝ գլխավոր շտաբի կողմից նույնիսկ կազմված է եղել «սև ցուցակ», որում ընդգրկված են եղել երկրում հայտնի մի շարք մարդիկ, այդ թվում նաև՝ երկրի նախագահ Արդուլահ Գյուլը, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպություններ: Նրանց մեղադրել են Թուրքիայի տարածքային մասնատումը ցանկացող եվրոպական ու ամերիկյան տարբեր հիմնադրամներից ֆինանսական միջոցներ ստանալու և երկրի ներսում վերջիններիս պլանների իրականացման մեջ:

Դանիացի պրոֆեսոր Դ. Յունգի բնորոշմամբ՝ Թուրքիայի պետական էլիտայի (այդ թվում՝ քաղաքագույն սպայակազմի-ինդ.) շատ ներկայացուցիչներ երկրի ներսում առկա հիմնախնդիրները դիտարկում են արտաքին դավադրության տեսանկյունից՝ դրանք մեկնաբանելով որպես արտաքին ուժերի կողմից

⁴⁶ Kirişçi Kemal, Turkey's Foreign Policy in Turbulent Times, Chaillot Paper, No 92, September 2006, Institute for Security Studies, p. 33, <http://www.iss.europa.eu/uploads/media/cp092.pdf>.

⁴⁷ Göcek Muge Fatma, The Transformation of Turkey: Redefining State and Society from the Ottoman Empire to the Modern Era, 2011, p.99, Sevri Sendromu' nedir ve neden azar?!, *Zaman*, 07.07.2009.

⁴⁸ Martin Lenore G., Keridis Dimitris, The future of Turkish foreign policy, MIT Press, 2004, p. 120.

⁴⁹ Turkish General Challenged the EU, <http://turkishweekly.net>, 03.10.2006.

⁵⁰ Командующий сухопутными ВС: Турция столкнулась с угрозами светским принципам, <http://www.regnum.ru/news/710842.html>.

⁵¹ Genelkurmay'ın Türkiye'yi sarsacak gizli planı... *Bugün*, 20.06.2008.

բուրքական պետության ամբողջականության քայքայմանն ուղղված քայլեր⁵²: Վերոնշյալ ձևակերպումն առավել ամբողջացնում են 2007 թ. հունիսին Էրզրումում «Աբթյուրք» համալսարանի 50-ամյակի հանդիսությունների շրջանակներում անցկացված հայ-բուրքական հարաբերությունների վերաբերյալ միջազգային գիտաժողովի ժամանակ բանակի պաշտոնաթղ զեներալ Էդիվ Բաշերի այն խոսքերը, որ «թուրք-հայկական հարաբերություններում առկա խնդիրները պայմանավորված են օտարերկրյա միջամտությամբ և որպես ճնշման միջոց, դրանք օգտագործվում են Թուրքիայի դեմ: Ինչ էլ որ անվանենք՝ «Սևրի սինդրոմ», թե զգոնության դրսևորում, որոշ հարևան երկրներ՝ ներառյալ Հայաստանը, շարունակում են առաջնորդվել Թուրքիան մասնատելու մտադրությամբ»⁵³: Թուրք հետազոտողների համաձայն՝ չնայած «Սևրաֆորիայի» դրսևորումները ոչ այնքան արդիական են ողջ հասարակության շրջանում, այդուհանդերձ, քաղաքական և հատկապես զինվորական էլիտան հավատում է, որ եվրոպան Թուրքիային Սևրի պայմանագրին դեմ հանդիման կանգնեցնելու գաղտնի օրակարգ ունի: Նմանատիպ վախերն ի հայտ են գալիս հատկապես այն ժամանակ, երբ ԵՄ-ի հետ բանակցություններում արժարժվում են քրոակյան, հայկական և կիպրական թեմաները⁵⁴:

Wikileaks-ի միջոցով բացահայտված Անկարայում ԱՄՆ դեսպանության գաղտնի դիվանագիտական հեռագրերում,

⁵² Jung Dietrich, The Sevres Syndrome: Turkish Foreign Policy and its Historical Legacies, http://www.unc.edu/depts/diplomat/archives_rol/2003_07-09/jung_sevres/jung_sevres.html.

⁵³ Չաքրյան Հ., Հայ-բուրքական հարաբերություններին նվիրված «միջազգային» գիտաժողով Էրզրումում, Ազգ. 28.06.2007: Է. Բաշերը 1990-ականների վերջից մինչև 2002 թ. գլխավորել է ՆԱՏՕ-ի Հարավարևելյան դաշնակցային ցամաքային զորքերի հրամանատարի, ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի, 2-րդ դաշտային բանակի հրամանատարի պաշտոնները:

⁵⁴ Uslu Emrullah, Aytaç Önder, նշվ. աշխ., էջ 131.

որոնք քննության էին առել 2003 թ. բուրքական բարձրագույն սպայակազմում տիրող իրավիճակն ու կողմնորոշումները, նշում էր, որ Թուրքիայի բարձրագույն սպայակազմն ու գլխավոր շտաբը գաղափարական-արժեքային, աշխարհայացքային, աշխարհաքաղաքական կողմնորոշումներով միատարր չեն: Ավելին՝ բուրքական գլխավոր շտաբում առկա է երեք հավանաբար խումբ, որոնցից մեկը ներկայացնում են «ազգայնականները», որոնք հարցականի տակ են դնում ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների անհրաժեշտությունը, ընդդիմանում են ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը, բավական անվստահաբար են մտնեցնում արտաքին աշխարհին ու ամենբնի և պնդում են քեմալիզմի համակարգի պահպանության անհրաժեշտությունը⁵⁵:

Վերջին շրջանում բուրքական բարձրագույն զինվորականությունն այլևս միատարր չէ թե արժեքային-գաղափարական, թե արտաքին քաղաքականության կողմնորոշումների ատումով: Արդեն իսկ գլխավոր սպայակազմի մեջ ի հայտ են եկել հակադիր «ճամբարներ», որոնց մեջ իր ուրույն տեղն ունի այն խումբը, որը խիստ բացասաբար է վերաբերում ԱՄՆ-ին, ԵՄ-ին և Արևմուտքին՝ ընդհանրապես: Բարձրաստիճան զինվորականների շրջանում դավադրությունների տեսության վրա հիմնված աշխարհընկալումն ու «Սևրաֆորիայի» դրսևորումները պայմանավորված են մաս այն հանգամանքով, որ հենց զինվորականությունն է հանրապետական Թուրքիայում ավանդաբար եղել հասարակական-քաղաքական գործընթացների ուղղորդման դեկլին՝ անվտանգության, տարածքային ամբողջականության ու ազգային միասնակամության ապահովման տեսանկյունից լինելով ավելի զգայուն: Բացի այդ, այսինքն՝ զինվորակա-

⁵⁵ Genelkurmay'ı üye ayırışlar!, <http://www.haberturk.com/gundem/haber/615002-genelkurmayi-uce-ayrismislar>, 28.03.2011: WikiLeaks on Turkey, <http://www.todayszaman.com/columnist-239614-wikileaks-on-turkey.html>.

նուրբյան շրջանում «Մերի սինդրոմի» օրյեկտիվ առկայությունից, նաև հենց զինվորականության կողմից է երկրի հասարակական-քաղաքական կյանքի մեջ ամրագրվել ու ուռճացվել Թուրքիայի դեմ «շարունակական դավադրությունների հոգեբանությունը»:

Քարտեզների պատերազմ

Թուրքիայում մեծ աղմուկ բարձրացրեց 2006 թ. հունիսին ամերիկյան «Armed Forces Journal» ամսագրում ամերիկացի գնդապետ Ռալֆ Պետերսի՝ Մերձավոր Արևելքի ապագայի կանխատեսումների մասին հոդվածը, որի համաձայն՝ Մերձավոր Արևելքի ներկայիս «սահմանները գծված են արյունով», և միայն դրանց վերաձևումները կարող են վերականգնել արդարությունը: Ըստ այդ հոդվածի ու կից ներկայացված քարտեզի՝ Թուրքիան նույնպես կանգնած է մասնատման ու նրա տարածքի մի մասի վրա անկախ քրդական պետության ստեղծման հեռանկարի առջև⁵⁶:



Ամերիկացի գնդապետի այդ հրապարակումն ու ներկայացված քարտեզը Թուրքիայի քաղաքական ու վերլուծական որոշ շրջանակների կողմից ընկալվեց որպես ամերիկյան աշ-

⁵⁶ Peters Ralph, Blood borders, How a better Middle East would look, <http://www.afj.com/2006/06/1833899>.

խարհաքաղաքական մտադրությունների ներկայացում՝ ոչ պաշտոնական ճանապարհով: Թուրքական «Yeni Safak»-ի հրապարակումներից մեկի համաձայն՝ «նույնիսկ եթե ամերիկյան զինվորական պարբերականում տպագրված հոդվածը չի արտահայտում ամերիկյան բանակի պաշտոնական տեսակետները, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի քաղաքական ու զինվորական ընտրյալների մի հատվածի կողմից հողվածում առաջ քաշված մտքերը ընդունվում են լրջությամբ»⁵⁷: Այդ հողվածի հրապարակումից կարճ ժամանակ անց նույնիսկ Թուրքիայի «Աշխատավորական» կուսակցության կողմից Ստամբուլում կազմակերպվեց հատուկ ցուցադրություն, որտեղ ներկայացված էին Սևրի պայմանագրից մինչև վերոհիշյալ հրապարակումը Թուրքիայի մասնատման վերաբերյալ տարբեր երկրների պետական ու ոչ պետական հաստատությունների կողմից հրապարակված քարտեզները⁵⁸:

Թուրքիայում լայն արձագանք ստացավ նաև 2009 թ. հոկտեմբերին ֆրանսիական «Le Figaro» պարբերականի այն հրապարակումը, որտեղ ներկայացվում էր Թուրքիայի էներգետիկ միջանցքների քարտեզը, որը կազմվել էր ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության ու էներգետիկայի դեպարտամենտի կողմից: Ըստ այդ քարտեզի, Հայաստանի ու Թուրքիայի սահմանագիծը որոշվել էր Սևրի պայմանագրի համաձայն⁵⁹: Թուրքական մամուլն ու վերլուծաբանները դա որակեցին որպես կանխամտածված քայլ, որտեղ սահմանագծված է Մեծ Հայաստանի սահմանը:



2008 թ. Թուրքիայի միջնակարգ դպրոցների 5-րդ դասարանի աշակերտների համար որպես օժանդակ ձեռնարկ պատրաստված գրքում Թուրքիայի աշխարհագրական քարտեզի փոխարեն տպագրվել էր Սևրի պայմանագրի սահմաններով քարտեզը, որը նոր սկանդալ էր առաջացրել: Պարզվել է, որ մամանտիպ ձեռնարկներից մեկում ներկայացվել է Սևրի պայմանագիրն ու համապատասխան քարտեզը, և հրատարակչությունում դա սխալմամբ արտատպել են որպես աշխարհագրական քարտեզ: Թուրքական «Yeni çağ» թերթը հրապարակել էր ձեռնարկում ներկայացված այդ քարտեզը⁶⁰:

⁵⁷ Aktürk Şener, 'Yeni Ortadoğu' Projesi, Ortadoğu'yu paramparça edecek, *Yeni Safak*, 12.08.2006: Bir haritadan çıkartılan dersler, http://www.diplomatikgozlem.com/haber_oku.asp?id=2835.

⁵⁸ 'Türkiye'yi Bölen Haritalar' sergisi, *Sabah*, 30.08.2006.

⁵⁹ Ազգ., 17.10.2009:

⁶⁰ Bakanlıktan Sevr'e onay, *Yeniçağ*, 11.01.2008.



2009 թ. թուրքական բանակի հրամանատարությունը նույնիսկ հանդես եկավ հատուկ օրենսդրական նախաձեռնությամբ, որը վերաբերում էր քարտեզների հրապարակմանն ու տպագրությանը: Դրանով փորձ էր արվում կասեցնել տարբեր քարտեզների հրապարակումն ու տպագրությունը, որոնք ներկայացնում են Թուրքիայի մասնատումն ու տրոհումը: Բանակի բարձրագույն հրամանատարության այդ նախաձեռնությունը պատասխան քայլ էր վերջին տարիներին Թուրքիայի մասնատմանը, ինչպես նաև նրա տարածքում հայկական ու քրդական պետությունների ակալությունը վերաբերող քարտեզների հաճախակի ի հայտ գալուն, ինչի պատճառով էլ նախատեսվում էր, որ ԶՈՒ-ը այդ ոլորտում հսկողություն են իրականացնելու⁶¹:

Թուրքիայում, կարելի է ասել, սկսվեց «քարտեզների պատերազմ»: Թուրքիայի թե քաղաքական, թե գիտական ու վերլուծական հանրությունը ներքաշվեց այդ պատերազմի մեջ: Թուրքիայի հնարավոր մասնատումը պատկերող քարտեզների ի հայտ գալը առաջացրեց սուր հակազդեցություն, ինչն արտահայտվում էր սեփական աշխարհաքաղաքական հավակնու-

⁶¹ Türkiye'yi Bölen Haritalara Ordu El Koydu, 07.01.2009, http://www.kitlecizgisi.com/haber_detay.asp?id=100016&uyeid=0.

թյուններն ու ազգայնամոլական-ժապավայաշտական նկրտումներն ի ցույց դնող քարտեզների հրապարակմամբ: Մասնավորապես, 2007 թ. նոյեմբերին թուրքական «Güneş» թերթը հրապարակեց «Ընդլայնված Թուրքիա» վերտառությամբ մի քարտեզ, որտեղ այդ երկրի տարածքներն «ավելացել» էին ի հաշիվ հարևան երկրների: Կարմիր գույնով ընդգծված Թուրքիայի սահմանների մեջ էին ներառված ոչ միայն իրաքյան Մոսուլի, Բիրկոկտի շրջանները, այլ նաև Էգեյան ծովի բոլոր հունական կղզիները, Կիպրոսը, Կրետեն, Հոդոս կղզին, Հունաստանի հյուսիս-արևելյան շրջանները և Հայաստանն ամբողջությամբ⁶²: Նման տեսակի քարտեզներն սկսեցին հրապարակվել առանձին լրատվամիջոցների էջերում, տարբեր հոդվածներում ու հրատարակություններում:



Նմանատիպ մի քարտեզ էլ նույն բովանակին հրապարակել էր թուրքական «Internet Haber» լրատվական գործակալությունը, որպես ընդդիմացում «մասնատված Թուրքիայի» տարաբնույթ քարտեզների ի հայտ գալուն⁶³:

⁶² Al sana harita, *Güneş*, 21.11. 2007.

⁶³ Bu da yeni Türkiye haritası, <http://www.internethaber.com/bu-da-yeni-turkiye-haritasi--5703y.htm>.



Նշենք, որ այս քարտեզում ներկայացվածը գրեթե համապատասխանում է դեռևս 1933 թ. ԱՄՆ բանակի գլխավոր շտաբի պետ Դ. Մակ-Արթուրբին Արաբյուրբի կողմից ասված հայտնի խոսքերին. «Նրե Ալլահի կամոք բախտ վիճակվի, Մտալը, Քիրկուկը, Էգեյան կղզիներն ու Կիպրոսը, Սալոնիկը ներառյալ ողջ Արևմտյան Թրակիան, հետ եմ բերելու և Թուրքիայի սահմանների մեջ ներառելու»⁶⁴: Ներկայումս էլ այս խոսքերն արդիական են ինչպես որոշ քաղաքական, զինվորական, այնպես էլ վերլուծական-փորձագիտական քննարկումներում: Նշենք, որ Քիրկուկը ներառված էր 1920 թ. ընդունված «Ազգային ուխտի» մեջ, այսինքն՝ նախատեսված էր, որ այն պետք է ընդգրկվեր նոր Թուրքիայի տարածքի մեջ: Ինչպես իրավացիորեն նկատում է թուրքագետ Ա. Շաքարյանը, չունենալով ռազմական լուրջ հնարավորություններ ու աշխարհաքաղաքական բարենպաստ պայ-

⁶⁴ Ekekon Özkan, Atatürk'ün 77 Yılı Önce Antalya'mıza Geliş Nedeni, [http://www.marmarisbulten.com/Haber/ATATURKUN_77_YIL_ONCE_ANTA_LYAMIZ_A_GELIS_NEDENI/11.03.2008: Genisletilmis Türkiye" haritas, www.ihlas.net.tr/Haber/Files/29071843bs7.png](http://www.marmarisbulten.com/Haber/ATATURKUN_77_YIL_ONCE_ANTA_LYAMIZ_A_GELIS_NEDENI/11.03.2008: Genisletilmis Türkiye).

մաններ, ժամանակավորապես Մերձավոր Արևելքի և այլ ուղղություններով թուրքական ծավալապաշտական նկրտումները ուղղակի դադարեցված էին՝ սպասելով հարմար ժամանակի ու առիթի⁶⁵: Իրականում թուրքական ռազմաքաղաքական դեկավարությունը երբեք չի հրաժարվել իր ագրեսիվ նկրտումներից, ուղղակի ժամանակաշրջանն ու զարգացումները թույլ չեն տվել: Մ. Քեմալը և հանրապետական Թուրքիայի սյուս պետական ու ռազմական գործիչները դեռևս չէին հրաժարվել թուրքական մեծապետական ինպերիալիստական ծրագրերից և փայլախոյուն ին Օսմանյան կայսրության սահմանները, եթե ոչ ամբողջապես, ապա գոնե մասամբ վերականգնելու ծրագրեր: Այդ մտազրկի մեջ նրանք առանձնահատուկ տեղ էին հատկացնում Անդրկովկասի և Արարական Արևելքի երկրների գրավմանը⁶⁶: Օրինակ՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին թուրքական ծավալապաշտական հավակնությունները դրվել էին գործնական կիրառության հարթություն, այլ խնդիր է, որ Գերմանիայի պարտությամբ այդ նկրտումները հոսյ գնդեցին: 1974 թ. Կիպրոսի հյուսիսային մասի բռնագավթումը թուրքական ուժերի կողմից դրա վառ վկայությունն էր: Թուրքական ռազմական պլաններում էլ նաև Հյուսիսային Իրաք ռազմական ներխուժում իրականացնելը, Քիրկուկի շրջանի բռնագավթումը, սակայն ԱՄՆ-ի զապողական գործոնն ուղղակի կասեցրեց նման հնարավորությունը: 1990-ականների սկզբներին Թուրքիայի ռազմաքաղաքական դեկավարությունը հստակ պլաններ էր մշակում Հայաստան և Վրաստան ռազմական ներխուժում իրականացնելու համար, և այդ ուղղությամբ արդեն ամենաքարծր մակարդակով պատրաս-

⁶⁵ Шакарян А., Турция между Востоком и Западом. Свободный выбор или временный маневр? Регион и мир, научно-аналитический журнал ИПИ, N. 1, 2010, с. 85.

⁶⁶ Հովհաննիսյան Ն., Արարական երկրների նկատմամբ Թուրքիայի տարածքային հավակնությունները նորագույն շրջանում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Համար 23, Երևան 2004, էջ 160:

տություններ էին տեսել: 1992 թ. մարտին, Արցախյան գոյամարտի ընթացքում, Թուրքիայի նախագահ Թ. Օզալը սպառնաց, որ թուրքական կողմը ռազմական գործողություն կիրականացնի Հայաստանի նկատմամբ, իսկ թուրքական ցամաքային ուժերի կրանանատար Մ. Ֆիսունօղլուն հայտարարեց, որ թուրքական ուժերը պատրաստ են ներխուժել Հայաստան: 1993 թ. օգոստոսին Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերը դիմել էր թուրքական խորհրդարան՝ Հայաստանի սահմանի երկայնքով ԶՌԻ մոբիլիզացնելու՝ Նախիջևանը «հայկական ագրեսիայից» պաշտպանելու նպատակով: Հայաստան ներխուժելու հարցը նույնիսկ քննարկվել է 1993 թ. հոկտեմբերին կայացած Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում: Թուրքիայի համար որպես պատրվակ էր ծառայելու կամ քրդական գրոհայինների ճամբարների գոյությունը Հայաստանում կամ էլ Նախիջևանի պաշտպանությունը⁶⁷: Այս համատեքստում տեղին է այն ձևակերպումը, որ Թուրքիայի ժամանակակից արտաքին քաղաքականությունը սկսվում է երկրի տարածքային ամբողջականության պահպանման ու չմասնատման մակարդակից, իսկ հնարավորության դեպքում՝ հասնում մինչև տարածքային հավակնությունների ու գերիշխանություն հաստատելու մակարդակի, այսինքն՝ ինքնապահպանման առաջնահերթությունից հասնելով մինչև համընդհանուր գերիշխանություն⁶⁸:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ասել, որ Թուրքիայի մասնատումը պատկերող տարբեր քարտեզների շրջանառությունը բավական ցավագին է ընդունվում քաղաքական, հասարակական ու վերլուծական շրջանակների կողմից, և դրանք միշտ մեկնաբանվում են Թուրքիայի նկատմամբ արտաքին դավադրությունների համատեքստում՝ ավելի պարզ ի ցույց դնելով

⁶⁷ Chrysanthopoulos Leonidas, *Caucasian Chronicles, Nation Building and Diplomacy in Armenia 1993-1994, USA, 2002*, pp. 76-78.

⁶⁸ Շարաբյան Ա., Արարատից այն կողմ. ավակողմավորելով Թուրքիան, երևան 2011, էջ 11:

«Սերի սինդրոմի» դրևևորումները: Եվ որպես պաշտպանական բնագոյ՝ դրանց հակադրվելու են գալիս թուրքական ծավալապաշտական հավակնություններն որվագծող տարատեսակ քարտեզներ:

Սերաֆորիան հանրային գիտակցության մեջ և հակաարևմտականությունը

Թուրքական հասարակության շրջանում ազգայնական տրամադրությունների ուժեղացման հետ միասին ավելի է բուսանում ԵՄ անդամակցության պաշտպանության գործունը, ինչն ընդհանուր առմամբ տեղավորվում է հակաարևմտականության (Anti-Westernism) տրամադրությունների ձևավորման մեջ: Պատահական չէ, որ վերջին մի քանի տարիների ընթացքում Թուրքիայում դիտվում է հակաամերիկյան տրամադրությունների ակտիվացման միտում (Anti-American tendencies): Ամերիկյան «Միջազգային Հանրապետական Ինստիտուտի» (IRI) 2006 թ. դեկտեմբերի ուսումնասիրությունների համաձայն՝ բուրք հասարակությունը որպես երկրի ամենավատ բշմամի է համարել Միացյալ Նահանգներին (45%) և Ֆրանսիային (9%): Վերջինիս նկատմամբ նման բացասական դիրքորոշումն առաջին հերթին պայմանավորված էր 2006 թ. հոկտեմբերին խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը մերժելու համար քրեական պատիժ սահմանելու օրինագծի ընդունմամբ, ինչպես նաև ԵՄ անդամակցության հարցում Ֆրանսիայի բացասական դիրքորոշմամբ⁶⁹: Ամերիկյան կառավարությանը մոտ կանգնած «Pew Global Center» կենտրոնի կողմից 2007 թ. առաջին անցկացված հետազոտությունը պարզել է, որ բուրք հասարակության 64 %-ը գտնում է, որ Թուրքիայի համար ապագայում ամենամեծ վտանգը ներկայացնում է Միացյալ Նահանգները: ԱՄՆ-ի նկատմամբ քուրքական հասարակական կարծիքը 2007 թ. գրանցվել է որ-

պես բավականին անբարենպաստ՝ 83 %, այնինչ 2002 թ. այդ ցուցանիշը եղել է 54 %⁷⁰:

Որոշակիորեն փոխվել է վերաբերմունքը նաև ՆԱՏՕ-ի նկատմամբ՝ որպես Թուրքիայի անվտանգության կարևոր ռազմաքաղաքական ինստիտուտի: 2006 թ. հարցվածների 44 %-ն է համարել, որ ՆԱՏՕ-ն էական նշանակություն ունի Թուրքիայի անվտանգության համար՝ ի տարբերություն 2004 թ. 54 % ցուցանիշի: Հարցվածների շրջանում հակաամերիկյանիզմի մասն միտումները պայմանավորված են եղել ԱՄՆ-ի կողմից Իրաքում ռազմական գործողությունների սկսման և Թուրքիային այդ հարցում չեզոքացնելու, Թուրքիայի տարածքում քրդական զինյալների նկատմամբ ոչ «կառուցողական» վերաբերմունքով, ինչպես նաև վերջին շրջանում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված Կոնգրեսի նախաձեռնություններով: Այս առումով բնորոշ էր Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի պետ Յ. Բյույուքանջլի ելույթը, որում նա հայտարարեց, որ Թուրքիան ազգային շահեր ունի հյուսիսային Կիպրոսում, որ Հայոց ցեղասպանության մեղավորներն ամհինն են, որ ամերիկացիները բավականաչափ կոշտ չեն հետապնդում քուրդ զինյալներին Հյուսիսային Իրաքում:

Հակաարևմտյան և հակաիմպերիալիստական միտումները լուրջ ազդեցություն են ձեռք բերում նաև երիտասարդության շրջանում, որոնք միևնույն ժամանակ նպաստում են ազգայնականության զարգացմանը: Այդ մասին են վկայում վերջին տարիներին երիտասարդական տարբեր կազմակերպությունների ու շարժումների կողմից իրականացված զանգվածային միջոցառումները, որոնք հիմնականում կրել են հակաիմպերիալիստական բնույթ՝ առաջին հերթին «ֆիլախա» ընտրելով ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին: Ըստ նրանց պատկերացումների՝ ՆԱՏՕ-ն իրենից

⁶⁹ Survey of Turkish Public Opinion, November 18, 2006 – December 5, 2006, The International Republican Institute, <http://www.iri.org/sites/default/files/2007%20April%2018%20Survey%20of%20Turkish%20Public%20Opinion.%20November%2018--December%205.%202006.pdf>.

⁷⁰ Why Turks Feel Threatened by the US, September 05, 2007, World Public Opinion, <http://www.worldpublicopinion.org>.

ներկայացնում է ամերիկյան իմպերիալիզմի առաջամարտիկը: Նրիտանադոմինիոնի շրջանում և առկա է տարածքային մասնատման վախի զգացումը⁷¹: Թուրք քաղաքագետ Մ. Փերինչեքը համարում է, որ Թուրքիան կյանք կունենա որպես պետություն, եթե դուրս գա ՆԱՏՕ-ից, հրաժարվի ԵՄ-ին անդամակցությունից և հարաբերություններ զարգացնի եվրասիական երկրների հետ: Նրա կողմից ևս ՆԱՏՕ-ն, առաջին հերթին՝ ԱՄՆ-ը, դիտվում են որպես իմպերիալիստական ուժեր, որոնց նպատակը տարածաշրջանում «կեղտոտ գործերն» են, մասնավորապես՝ մի շարք երկրների, այդ թվում նաև Թուրքիայի մասնատումը: Իսկ Կիպրոսի վերամիավորումն ու Մեծ Հուրդիստանը, նրա կարծիքով, այդ նպատակին ուղղված քայլեր են⁷²:

Թուրքիայի բարձրաստիճան սպայակազմի մի մասի շրջանում վերջին տարիներին ձևավորվել են ավանդական արևմտյան ուղղության արտաքին քաղաքականության այլընտրանքային տարբերակների շուրջ հայացքներ ու մոտեցումներ, որոնց հիմքում ընկած է որպես Արևմուտքին հակակշիռ՝ եվրասիական տերությունների հետ համագործակցության զարգացման առաջնահերթությունը: Այս համատեքստում, ինչպես իրավագիտրեն նշում է թուրք հետազոտող Ի. Դադը, հակաարևմտականության

ու հասկամերիկյան տրամադրությունները ակնառու են ոչ միայն թուրքական հանրության լայն շրջանակներում, այլ նաև զինվորականության մեջ: «Հակաարևմտյան, հակաիմպերիալիստական ու հակազրոքալիստական գաղափարախոսական հոսանքները, միևնույն ժամանակ շաղկապվելով երկրի լիսակտար անկախության շեշտադրման հետ, հաջողության են հասել թուրքական զինվորական շրջանակներում»⁷³:

Սա արդեն նշանակում է, որ թուրքական բանակի վերնախավում մեծան կերպ մտածողները քիչ չեն: Իսկ այդ միտումը հատկապես վերջին տարիներին ավելի է ակնհայտ դարձել, ինչը պայմանավորված է ինչպես ներթուրքական, այնպես էլ արտաքին քաղաքական ոլորտում տեղի ունեցող զարգացումներով: Թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում վերջին տարիներին նկատվող բացասական վերաբերմունքն Արևմուտքի նկատմամբ իր անդրադարձն է ունենում նաև երկրի բարձրագույն զինվորականության վրա, և այն մոտեցումը, որ ավանդաբար Թուրքիայի բարձրագույն սպայակազմը եղել է ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական հայացքների ու ռազմավարության կողմը, այլևս գերակայող չէ: Արդեն իսկ բարձրագույն հրամանատարական շրջանակներում Արևմուտքը, մասնավորապես ԱՄՆ-ն ու ՆԱՏՕ-ն, չեն դիտվում որպես Թուրքիայի անվտանգության երաշխավոր, առավել ևս որ առանձին հիմնախնդիրների վերաբերյալ ունեն հակառակ դիրքորոշումներ: Այս պարագայում թուրքական զինվորականությունը սկսել է ինչ-որ չափով վերագնահատել առկա իրողությունները և առավելապես համոզե զալ սեփական աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական մոտեցումներով ու գործելակերպով: Բացի այդ, Թուրքիայի ազգային անվտանգության ու մի շարք այլ կարևոր հիմնախնդիրների նկատմամբ Արևմուտքի՝ հատկա-

⁷¹ 2010 թ. հոկտեմբերին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ա. Ֆ. Ռասմոսենի Անկարա այցի ժամանակ թուրքական «Նրիտանադոմինիոնի միասնություն» շարժումը հավաք էր կազմակերպել հակաիմպերիալիստական լուսնագներով: Ըստ շարժման առաջնորդ Բ. Յուրսեհի՝ «ՆԱՏՕ-ն վնասակար կազմակերպություն է, մի՞թե այն չիրականացրեց Հարավարևմտյան մասնատումը, մի՞թե նույն բանը չի կատարվում Աֆղանստանում և այլ տարածաշրջաններում: Դա է ՆԱՏՕ-ի առաքելությունը»: Տե՛ս «Долой американский империализм»: в Турции протестуют против визита генсека НАТО, <http://www.regnum.ru/news/td-abroad/turkey/1331977.html>:

⁷² Մ. Փերինչեքը Թուրքիայի Աշխատավորական կուսակցության ղեկավար, տիրաառույթի Դոդու Փերինչեքի որդին է, որը դատապարտվել էր՝ Շվեյցարիայում Հայոց ցեղասպանությունը ժխտելու մեղադրանքով: Իսկ այժմ որպես մեղադրյալ ներգրավված է «Էրգենեկներ» ահաբեկչական խմբավորման գործով դատավարության մեջ: Полеголю: Турция сохранил государство, если уйдет из НАТО и откажется от ЕС, *ИА REGNUM*, 24.06.2010.

⁷³ Dağı İhsan, Understanding anti-Americanism in Turkey, *Today's Zaman*, 02 July 2007.

պես ԱՄՆ-ի տրամագծորեն հակառակ մոտեցումների պարագայում, թուրքական զինվորական շրջանակները ինքնըստինքյան ձեռք են բերում անվտանգության ու անապահովության զգացում և ստիպված են աշխարհաքաղաքական հայացքներն ու հայեցակարգերը վերախմբագրել սեփական մոտեցումներով՝ առավելագույնս ելնելով երկրի ազգային անվտանգության ու աշխարհաքաղաքական իրենց հավակնությունների շահերից: Ուստի այս առումով ևս թուրքական զինվորական էլիտան, ի տարբերություն նախկին ժամանակների, երբ ստիպված էր առավելապես հաշվի նստել ամերիկյան կամ ՆԱՏՕ-ական ռազմավարական շահերի հետ, սկսել է առավել անկախ մտածել ու գործել: Այս առումով էական քայլ կատարվեց, երբ 2003 թ. մայրսին Թուրքիան մերժեց ՆԱՏՕ-ին՝ իր տարածքն օգտագործել Իրաքի դեմ պատերազմում: Չմայած սա քաղաքական որոշում էր, այնուամենայնիվ, այն առաջնահերթորեն հավանության էր արժանացել նախ գլխավոր շտաբում, ինչը նույնիսկ անակնկալ էր ամերիկյան վարչակազմի ու որոշ գերատեսչությունների համար: Այդ իրադարձությունը շրջադարձային էր ինչպես թուրք-ամերիկյան հարաբերությունների, այնպես էլ թուրքական ռազմական ղեկավարության նոր հայեցակարգի ու նոր մոտեցումների որդեգրման առումով:

2006 թ. սկսած Թուրքիայում աստիճանաբար նվազել է ԵՄ անդամակցության ջատագովների քիվը՝ 2008 թ. հունվարին հասնելով 30%-ի: Սա ամենացածր ցուցանիշն է, որ գրանցվել է Թուրքիայում երբևէ: Նման միտումը պայմանավորված էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության տրամաբանությամբ: ԵՄ ազդեցիկ երկրների ղեկավարների կողմից այն հայտարարությունները, որ Թուրքիան դեռևս պատրաստ չէ անդամակցության և որ, Թուրքիան կարող է անդամակցության փոխարեն արտոնյալ գործընկերոջ կարգավիճակ ստանալ, հյուսիսային Կիպրոսի և ազգային մակարդակի մի շարք խնդիրների

նկատմամբ եվրոպական նախապայմանների առաջադրումը, քրոպական անջատողականության նկատմամբ ոչ կոշտ դիրքորոշումը և այլն, թուրքական հասարակության մեջ առաջացրեցին խոր հիասթափություն և ԵՄ կողմից «ոչ ըստ արժանվույն» գնահատվելու տրամադրություններ ու պատկերացումներ: Բացի այդ, Ֆրանսիայում, Շվեյցարիայում Հայոց ցեղասպանությունը մերժելու համար պատիժ սահմանող օրինագծերի առաջադրումն ու ընդունումը խիստ հակազդեցության հանդիպեցին Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակների կողմից՝ դրանք դիտելով որպես թուրքական ինքնությունն ու արժանավատությունը նվաստացնող գործողություններ, այսինքն մեկ անգամ ևս ապացուցելով թուրքական արժեքային համակարգի անհամատեղելիությունը եվրոպական համակարգում: Թուրքական հասարակության մեջ ուժեղանում է այն հակավաճուրդը, որ Եվրոպան ամբողջովին չի ցանկանում տեսնել Թուրքիային իր կազմի մեջ, ինչի պատճառով հասարակության նման հոսսահատությունը փոխհատուցվում է անող ազգայնականությամբ: Այդ գործոնների հետ մեկտեղ իր ազդեցությունն ունի նաև հասարակության մեջ իսլամական արժեքների ամրացումը, ինչն արդեն ոչ գրավիչ է դարձնում Եվրոպան: Եվ այսպես, ամփոփելով նշենք, որ Թուրքիայում առկա է և ժամանակ առ ժամանակ ուժեղանում է անվտանգությունն ու կասկածամտությունը Եվրոպայի և ընդհանրապես Արևմուտքի նկատմամբ, ինչն ավելի վառ է դրսևորվում ժամանակակից հասարակական-քաղաքական մտածելակերպում և քննարկումներում: Այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքում առկա է այն կարծրատիպը, որ Արևմուտքն իր մեջ թաքցնում է պետության քայքայման և մասնատման ծրագրեր: Ըստ էության, առկա է այն ընկալումը, որ Սերի պայմանագիրը կարող է ճորից վերածնվել և դրանում անմասն չի մնա Արևմուտքը:

2006 թ. դեկտեմբերին ամերիկյան «Ափագգային Հանրապետական ինստիտուտի» (IRI) կողմից անցկացված «Սևրի սինդրոմի չափումներ» խորագրով հարցումների համաձայն՝ հարցվողների 68 %-ը համակարծիք է եղել, որ Արևմուտքը ցանկանում է մասնատել և բաժանել Թուրքիան, իսկ 57% -ի կարծիքով՝ ԵՄ պահանջները նույնն են, ինչ Սևրի դաշնագրիինը: 71 %-ը կարծում է, որ Արևմուտքը օգնում է անջատողական ձգտումները, այդ թվում՝ նաև ԷԲԿ-ին⁷⁴: Թուրքական A&G հասարակական հետազոտությունների կենտրոնի «Պահպանողականությունը Թուրքիայում» ծրագրի շրջանակում հասարակական կարծիքի ուսումնասիրությունները նույնպես ցույց են տվել, որ հարցվածների 62%-ը հավատում է Թուրքիայի մասնատման արևմտյան ծրագրերին, իսկ 52%-ը վստահ է, որ ԵՄ անդամության ուղղությամբ կատարված բարեփոխումները չեն տարբերվում կապիտուլյացիայից: Ամերիկյան հետազոտական կենտրոնների կողմից 2010 թ. ապրիլին հրատարակված գեկույցի համաձայն՝ Թուրքիայի հասարակության շուրջ 70 %-ը բացասական վերաբերմունք ունի ԱՄՆ-ի նկատմամբ: Միացյալ Նահանգների գերմանական Մարշալ հիմնադրամի (GMF) Անկարայի գրասենյակի տնօրեն Օզգյուր Ուլյուհիսարըլըլըլը թուրք հանրության շրջանում մնա տրամադրությունները բացատրում է դեռ պատմական անցյալից օտար երկրների նկատմամբ անվստահության ու կասկածաձայնության միտումներով: Ըստ նրա՝ արտաքին քաղաքականության ու այլ երկրների հետ հարաբերություններում թուրքական հանրային կարծիքի ձևավորման մեջ առաջնային է անվտանգության բնագոյը, որն ունի իր պատմական պատճառները. «Թուրքիան Առաջին աշխարհամարտում տեսել է օկուպացիա, որի տարածքները գրավվել էին և դեռ

⁷⁴ Survey of Turkish Public Opinion November 18, 2006 – December 5, 2006. The International Republican Institute, <http://www.iri.org/sites/default/files/2007%20April%2018%20Survey%20of%20Turkish%20Public%20Opinion,%20November,%202006%2018--December%205,%202006.pdf>.

ավելին՝ այն դարձավ Սևրի պայմանագրով մի շարք երկրների միջև մասնատված երկիր: Եվ այդ համատեքստում ձևավորվել է յուրահատուկ Սևրի կամ Թանգինաթի սինդրոմը»⁷⁵:

2011 թ. հունվարին ամերիկյան «Wall Street Journal» պարբերականը հրատարակեց 2010 թ. դեկտեմբերին Թուրքիայի 31 վիլայեթում «Metropol» շազմավարական և հասարակական հետազոտությունների կենտրոնի կողմից անցկացված սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները, որոնց համաձայն՝ հարցվածների 43 %-ը որպես Թուրքիայի ամենամեծ սպառնալիք նշել է ԱՄՆ-ը: Ըստ նույն կենտրոնի ղեկավար Օ. Սանջալի՝ այս ցուցանիշը ամենաբարձրն է, որ երբևէ անցկացվել է Թուրքիայում իրենց կենտրոնի կողմից, և այդ չափունակական միտումը պայմանավորված է առավելապես Իրաքյան պատերազմով և այդ ուղղությամբ ամերիկյան քաղաքականության, ԱՄՆ-ի Կոնգրեսում իրար հաջորդող Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերի հայտնվելով ու թուրքական ղեկավարության կողմից ԱՄՆ-ի հասցեին հենչոլ ոչ դրական հայտարարություններով⁷⁶:

Հարցախոյզի արդյունքների համաձայն՝ քրդական հարցը դիտվել է որպես թիվ մեկ խնդիր: Հարցման մասնակիցների 53%-ի կարծիքով՝ Թուրքիան այժմ կանգնած է մասնատման վտանգի առջև, 52,1%-ի կարծիքով՝ քրդերին կհաջողվի ի վերջո ստեղծել առանձին պետություն, 59,9%-ը երկրի անվտանգության ամենամեծ ներքին սպառնալիք է անվանել ԷԲԿ-ն⁷⁷:

⁷⁵ Oranlı Barış, 'Türkler Çoğu Ülkeye Ofumsuz Bakıyor', 27.04.2010, <http://www1.voanews.com/turkish/news/Turkler-Cogu-Ulkeye-Ofumsuz-Bakiyor-92239264.html>.

⁷⁶ Türkler için en büyük tehdit, <http://www.bugun.com.tr/haber-detay/137245-turklerin-en-buyuk-tehdit-algisi-haberi.aspx>, 07.01.2011; Köni Hasan, 'Türk-Amerikan İlişkileri, Ortak Vizyonlar, Fırsatlar ve Farklılıklar', *Stratejik Düşünce*, Sayı 1, Aralık 2009, s. 32-33.

⁷⁷ Գարբիելյան Հ., Թուրքիան 2011-ին. հեռանկարների ուղիվածք, 25.01.2011, <http://noravank.am>:

2011 թ. հունվարին հրապարակված մեկ այլ հասարակական հետազոտության համաձայն, որն անցկացվել էր «Քաղիր Հաս» համայնարանի կողմից Թուրքիայի 26 վիլայեթում, հարցվածների 67 %-ը ԱՄՆ-ին մշել է որպես Թուրքիայի համար հիմնական սպառնալիք ներկայացնող երկիր: Իսկ Թուրքիայի համար որպես սպառնալիք ներկայացնող գործոններից մշվել են ՔԲԿ-ն, անջատողականությունը⁷⁸: Հարցվածների 59.9%-ի կարծիքով՝ Թուրքիայի համար առկա է մասնատման վտանգը, ինչն առավելապես կապված է քրդական խնդրի հետ⁷⁹:

Թուրքական հասարակության շրջանում հակամտերիկյան միտումները զգալիորեն կրում են մահ հոգեբանական այն բարդույթի ազդեցությունը, որ թուրքական պետության նկատմամբ ամերիկյան քաղաքական մտածողներն անկեղծ չէ, և ԱՄՆ-ը հարմար առիթի դեպքում կարող է կիրառել այնպիսի լծակներ, որոնք ուղղակի սպառնալիքի տակ կարող են դնել այդ երկրի ազգային անվտանգությունն ու տարածքային անբողջականությունը:

Թուրքիայում հասարակական շրջանակներում հակամտերիկյանիզմի ուժեղացման միտումների դրսևորումներից մեկը 2004 թ. երկու թուրք հեղինակների կողմից հրատարակված «Metal Firtına» (Metal Storm) նովելն էր, որն ամնախաղաղ հաջողություն ունեցավ վաճառքի ծավալներով: Թուրքական արդյունքների փոխանցմամբ՝ այդ գիրքը համակ ուշադրությանը ընթերցվում էր մույնիսկ Թուրքիայի ԱԳՆ-ում և գլխավոր շտաբում⁸⁰: Այն քննարկվել է Էսքիչեհիթի որոշ ուսումնական հաստատությունների «Ազգային անվտանգություն» առարկայի

շրջանակներում: Իսկ ռազմական ու ոստիկանական ուսումնական հաստատությունների ուսանողները քննարկումներ են անցկացրել հեղինակների հետ⁸¹: Ըստ այդ գրքի՝ դեպքերի զարգացումը տանում է նրան, որ ԱՄՆ-ը ռազմական գործողություններ է սկսում Թուրքիայի դեմ և ներխուժում թուրքական տարածք: Դրանից հետո ԱՄՆ-ը փորձում է գործի դնել Սևրի պայմանագրի կատարումը՝ Թուրքիան քաժանել հայկական ու հունական մասերի: Դրան ի պատասխան՝ Թուրքիան ռազմական դաշինք է կնքում Ռուսաստանի, Չինաստանի ու Գերմանիայի հետ և վերջում հաղթող դուրս գալիս⁸²:

Նման գրքի հրատարակումը, ընդհանուր առմամբ, կարելի է դիտարկել Թուրքիայում խորացող հակամտերիկյան տրամադրությունների ուժեղացման համատեքստում: Այն համընկավ ամերիկա-թուրքական հարաբերություններում սկսված փոխադարձ անվստահության մթնոլորտի հետ, երբ թուրքական կողմը մերժեց ԱՄՆ-ին՝ իր տարածքը տրամադրել Իրաք մտնելու համար, Իրաքում ամերիկյան ուժերի կողմից ձեռքարկվեցին թուրքական հատուկ ուժերի զինձառայողներ և այլն: Ամերիկյան փորձագետ Ջ. Բարանի քննողչմամբ՝ այդ գիրքը «ձախան մշանակություն ունի ներկայիս թուրքական մտածելակերպը հասկանալու համար»⁸³:

2005 թ. թուրքական «ARI» ԿԿ-ի և «Infakto» հետազոտական կազմակերպության կողմից Թուրքիայում հակամտերիկյան միտումները պարզելու համար անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հակամտերիկյան տրամադրությունները պայմանավորված են ԱՄՆ-ի կառավարության վարած

⁷⁸ En Büyük Tehdit ABD, <http://www.hurriyet.com.tr/gundem/16736131.asp>.

⁷⁹ Eser Kürşat, BUNLAR PARANOYA MI?,

<http://www.ortadogugazetesi.net/makale.php?id=8280>.

⁸⁰ Sure it's fiction. But many Turks see fact in anti-US novel, The Christian Science Monitor / February 15, 2005, <http://www.csmonitor.com/2005/0215/p01s04-woeu.html>.

⁸¹ «Kitabımız hayal ürünü değil, gerçeğin ta kendisi», *Vatan*, 17.02.2005; Kabine, «Türk- Amerikan Savaşım» okuyor, *Sabah*, 16.01.2005.

⁸² Grigoriadis Ioannis, Friends No More? The Rise of Anti-American Nationalism in Turkey, Middle East Journal, Winter 2010.

⁸³ Widmer Ted, Death to the Crusade, September 18, 2005, *The New York Times*, http://www.nytimes.com/2005/09/18/books/review/18widmer.html?pagewanted=1&_r=1

քաղաքակառուցումը: Կազմակերպության հիմնադիր անդամ է. Էրդողանը նկատել է, որ ԱՄՆ-ը և ԵՄ-ն ստիպված են հաշվի առնել Թուրքիայում առկա պարանոյան, անվտանգության խնդիրներում վախերն ու մտահոգությունները. «Մրանք բուրքական հանրության ամենաթույլ կողմերն են, և եթե խաղում են այդ զգացմունքների հետ, առաջ է գալիս հակազդեցություն և սուր քննադատություն»⁸⁴:

2009 թ. մայիսին Բահչեչեհիք համալսարանի պրոֆեսոր Յ. Էսմերի գլխավորությամբ «Քաղաքական և կրոնական ծայրահեղակառուցում» քննարկով անցկացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Թուրքիայում հարցվածների շուրջ 80 %-ը ԱՄՆ-ի ու ԵՄ-ի քաղաքակառուցումը հիմնական նպատակը համարել է բուրքական պետության բուլացումն ու մասնատումը, ինչը հավելյալ անգամ ի ցույց է դնում Արևմուտքի ու հատկապես ԱՄՆ-ի նկատմամբ խորը անվստահությունն ու անապահովության զգացումը Թուրքիայում⁸⁵:

Ամերիկյան վարչակազմի անդամների ու տարբեր փորձագետների կողմից արվող այն հայտարարությունները, որ Իրաքի ապագան Բաղդադի կենտրոնական իշխանությամբ 3 ինքնավար միավորումների ստեղծումն է՝ Քրդական ինքնավարությունը հյուսիսում, սուննիական՝ կենտրոնական շրջաններում և շիական՝ հարավային տարածքներում, ոչ միայն բուրքական հասարակական շրջանակներում, այլ նաև ռազմաքաղաքական ղեկավարության կողմից ընկալվում էին որպես Թուրքիայի տարածքային անվտանգության ուղղակի սպառնալիք: Այդ խնդրի հետ կապված՝ ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչ Ջ. Բադենի հայտարարությունը լուրջ հակազդեցություն գտավ

Թուրքիայի քաղաքական շրջանակներում: Թուրքիայի վարչապետի խորհրդական է. Բադըրը, հակադարձելով Բադենի հայտարարությանը, նշել է, որ «Իրաքում էթնիկ խմբերի, կրոնական կամ աշխարհագրական սկզբունքով բաժանումը կլինի սվեյի հետոն զնացող բաժանման սկիզբը»⁸⁶: Իհարկե, բուրքական ռազմաքաղաքական ղեկավարությունը լուրջ մտահոգություններ ունի, որ Իրաքում քրդական պետական միավորման գոյությունը սպառնալիք է Թուրքիայի հարավ-արևելյան քրդաբնակ տարածքներում քրդական անհնազանդության ու այդ տարածքների մասնատման համար:

Նման պատկերացումները ավելի հաճախ են հանդիպում ազգայնական կուսակցությունների, քոչակառու բարձրաստիճան գինվորականների և վերլուծաբանների հայտարարություններում ու հրապարակումներում: Թուրքիայի ընդդիմադիր «Ազգայնական շարժում» կուսակցության առաջնորդ Դ. Բահչեչին խստորեն քննադատել է կառավարող կուսակցության՝ քրդական հարցում վարած «ժանդուրժողական» քաղաքականությունը և հայտարարել, որ Թուրքիան կանգնած է մասնատման սպառնալիքի առաջ: Թուրքական մամուլի համաձայն, կուսակցության խորհրդարանական խմբակցության անդամների հետ հանդիպման ժամանակ Դ. Բահչեչին ասել է, որ «ազգային կապիտալի մեջ օտարերկրացիների հայտնվելը, տնտեսական կառուցվածքում հանձնվորակառուցումը, սոցիալական կառուցվածքում անվտանգության բացակայությունն ու խառնաշփոթը, քաղաքական կառուցվածքում անսկզբունքայնությունն ու շահագործումը, ազգային ինքնության մեջ շեղումներն ու միմյանցից հեռանալը, քաղաքական կառուցվածքի նեխումն ու վատթարանալը, միջազգային հարաբերություններում էլ՝ շանտաժն ու հակազդեցու-

⁸⁴ Laughnan Emily, Poll results on 'Anti-American sentiment' in Turkey, 16.02.2006,

http://www.mediabistro.com/portfolios/samples_files/yfYOzvAYecAYwF5eYxdMVIwEk.doc.

⁸⁵ Alpay Ş., ABD ve AB'ye güvensizlik neden?, *Zaman*, 09.06.2009.

⁸⁶ Eisele Albert, Anti-Americanism growing in Turkey partly because of Iraq war, official says, September 26, 2006, <http://acturca.wordpress.com/2006/09/27/anti-americanism-growing-in-turkey-partly-because-of-iraq-war-official-says/>.

բյուրն անբողջ դաժանությամբ կանգնած են թուրքերի առջև»։ «Այդ զարգացումը պարուրածն նմանություններ է ի ցույց դնում Սևրի պայմանագրին վիզ ծած և Մուրդուսի համաձայնագիրը ստորագրած վերջին օսմանյան կառավարություններին։ Ներկա իրավիճակը սկսել է մնանվել անցյալ դարաշարջանի սկզբին ազգային պայքարի ժամանակաշրջանում առկա սպառնալիքներին», -ասել է նա։ Բահչելին պահանջել է «նորից հարցման ենթարկել» Թուրքիայի ԵՄ անդամակցության գործընթացը։ «Մեր առջև դրված խաղը հստակեցվել է։ Ներքին ինքնուրույնների և մշակույթների բաժանման միջոցով սոցիալական և քաղաքական կառուցվածքի փլուզման հետ ազգային դիմադրության թուլացման համար, մոտենալով համաշխարհային միություններին, Թուրքիան, միևնույն ժամանակ, իր մեջ ինքնիշխանության բաժանման գործընթաց է ապրում։ Ամերկակայելի այս աստիճանին հասնելուց հետո, դեռ ավելի շատ ավերածության և ի վերջո քացարձակ խավարի ուղով չընթանալու համար, Թուրքիան պետք է անմիջապես նորից հարցման ենթարկի ԵՄ հետ իր հարաբերությունները», -հայտարարել է Բահչելին⁸⁷։ Նա Թուրքիայի ժամանակակից իրավիճակը նմանեցրել էր 1920-1923 թթ. հետ՝ նշելով, որ Թուրքիան գտնվում է սաղարանքի տակ, մասնատման սպառնալիքին դեմ հանդիման, և իրականությունն այն է՝ որ «Սևրը մոռնում է»⁸⁸։

Թուրքական «Vatan» թերթին տված հարցազրույցում Թուրքիայի «Դեմոկրատական» կուսակցության առաջնորդ Հ. Ջինդրուրը, Թուրքիայի առջև ծառայած ամենամեծ խնդիրը համարելով մասնատման սպառնալիքը, նշել է, որ «երկիրը գուցե և իր պատմության մեջ առաջին անգամ կանգնած է տրոհման,

տարածքային բաժանման վտանգի առջև», ինչը կապված է քրոսական խնդրի հետ⁸⁹։

Թուրքական հասարակական ու քաղաքական որոշ շրջանակներում հակաարևմտյան տրամադրությունները, արտաքին ուժերի նկատմամբ անվստահությունը իրենց հերթին բերում են ազգայնականության աճի դրսևորումների, որոնք արտացոլվում են նույնիսկ երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների վերանայման պահանջների հետ, և լստ ադմ, առաջ են քաշվում այլընտրանքային քաղաքականության նոր հրամայականներ։ Այսպես, մնան տրամաբանությամբ ԵՄ անդամակցության գործընթացը կասկածի տակ էր դրել «Մեծ միասնություն» կուսակցության հանգեցյալ առաջնորդ, Սքվաի պատգամավոր Մ. Յազըջըղլուն՝ Թուրքիայի ազգային շահերին ավելի համահունչ համարելով բյուրքական քաղաքակրթական ուղղությունը։ Իսկ նախկինում Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար, գեներալ Թ. Գըլընը Թուրքիայի արտաքին քաղաքականության համար առաջարկում էր նոր այլընտրանքային՝ արևելյան ուղղություն, լստ որի՝ Ռուսաստանը, Իրանը և Հյուսիսատանը կարող են դառնալ Թուրքիայի եվրասիական ռազմավարության առանցքը⁹⁰։ Նա ԵՄ-ն անվանել էր «Քրիստոնեական ակումբ», որը, որպես նեոգաղութատիրական ուժ՝ մտադիր է մասնատել Թուրքիան⁹¹։

ԵՄ անդամակցության նկատմամբ վերջին շրջանում քացասական տրամադրությունները Թուրքիայում, կարող ենք ասել, որ մի կողմից երկրում առկա ներքին արժեքային ճգնա-

⁸⁷ Şenocaklı Mine, Türkiye'nin en büyük meselesi bölünme tehdididir!, 25.05.2009, <http://haber.gazetevatan.com/haberprint.asp?Newsid=240027&tarix=&Categoryid=1>.

⁸⁸ Թմնջեր Բըլընը 1999-2001 թթ. եղել է Թուրքիայի ՉՈՒ-ի 3-րդ բանակի հրամանատարը, իսկ 2001-2003 թթ.՝ Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարը։ Karaveli Halil, Islamic-Western Embrace Fuels Eurasianism in the Turkish Military, The Turkey Analyst, Vol. 2, N. 4, 27 Feb. 2009, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, p. 3.

⁹¹ Kirişçi Kemal, նշվ. աշխ., էջ 36:

⁸⁷ Akşam, 23.04.2006.

⁸⁸ Bahçeli de Sevr Hortuluyor Dedi, <http://www.haberpan.com/bahceli-de-sevr-hortuluyor-dedi-haber/>, 22.04.2006.

ծանր, մյուս կողմից էլ թուրք հասարակության կողմից ընդհանուր առմամբ Արևմտաթի նկատմամբ խորացող կասկածանքի ու անվստահության արդյունք են, ինչի վառ դրսևորումը «Սերի սինդրոմի» կարծրատիպն է հասարակական-քաղաքական քննարկումներում:

Սերի պայմանագիրը, որն առնչվում է տարածքային հարցին, Թուրքիան ընդունում է շատ ցավազին: Թուրքական քաղաքական դասակարգի համար այն շարունակում է մնալ որոշակի սպառնալիք երկրի տարածքային ամբողջականությունը: Թուրքական ծագում ունեցող ամերիկյան փորձագետ Ալի Ռեզա Բյուլենբի վկայությամբ՝ թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունները տասնամյակներ շարունակ ունեն կոնկրետ հանձնարարականներ, որոնք վերաբերում են Սերի պայմանագրի հետ կապված հարցերին⁹²:

Իսլամիստական «Բարօրություն» (Refah) կուսակցության առաջնորդ և վարչապետ Ն. Էրբաքանը, առավել գերակա էր համարում իսլամական երկրների հետ Թուրքիայի ակտիվ համագործակցության անհրաժեշտությունը, ինչն, ըստ նրա, հնարավորություն կտար Թուրքիային իրականացնել իր առաջնորդ դառնալու նպատակը, քան որպես եվրոպական համայնքի անդամ դառնալ ԵՄ-ի ծառան. «Գառնալով ԵՄ-ի անդամ փոխարենը լքելով իսլամական երկրներին, Թուրքիան կկորցնի իր ինքնությունը և կընդունի երկրորդ Սերը»⁹³: Հետագայում, երբ ընդունվեց Եվրախորհրդարանի որոշումը, ըստ որի Թուրքիան 1996 թ. հունվարից դառնալու էր Եվրոպական մաքսային միության անդամ, «Բարօրություն» կուսակցության պաշտոնաբերքն այդ պայմանագրի էությունը նմանեցրեց Սերի պայմանագրի և Թանզինիսի բարեփոխումների հետևանքների հետ, իսկ կու-

սակցության առաջնորդ Ն. Էրբաքանը կոչ արեց սկսել ազատագրական պայքար, ինչպես եղել էր Սերի պայմանագրից հետո⁹⁴: Էրբաքանը պնդում էր, որ օտար պետությունները, աջակցելով քրդերին, իրականում ցանկանում են վերակերտել Մեծ Հայքը⁹⁵:

Նշենք, որ թուրք վերլուծաբաններից ու քաղաքական գործիչներից շատերը քրդական խնդիրը մեծամասամբ նույնականացնում են Հայկական հարցի հետ՝ քրդական շարժման մեջ փորձելով գտնել հայկական հետք: Գեռ 1995 թ. ապրիլին Հասապյում Քրդստանի տարագիր խորհրդարանի կազմավորման վերաբերյալ թուրքական «Zaman» թերթում տպագրված հոդվածում նշվում էր, որ հավաքի նպատակը Մեծ Հայաստանի ստեղծման համար պայքարն է, ՔԲԿ-ն հայկական աղբյուրներից ծնված կազմակերպություն է, Թուրքիայում գոյություն չունի քրդական հարց, դա հայկական հարցն է⁹⁶: Թուրքական «Giresun Postasi» էլեկտրոնային պարբերականում 2009 թ. Մ. Չարասի հեղինակած հոդվածում նշվում է, որ Թուրքիայի համար, ըստ էության, քրդական խնդիր, որպես այդպիսին, չկա և չի էլ եղել: Այն գոյություն ունի միայն Թուրքիայի մասնատմանը ձգտող ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Իսրայելի համար: Նրանց համար Հայկական հարցը նույնպես ծառայում է որպես միջոց՝ «Թուրքիայից փոխհաստցուն և հող պահանջելու համար»⁹⁷: ԵՄ-ի կողմից քրդական խնդրի կամ Հայկական հարցի շուրջ ցանկացած քննարկում կամ բարձրաձայնում թուրքական հասարակության մոտ առաջացնում է այն հարցադրումը, թե արդյոք ԵՄ-ն չի ցան-

⁹² Մուրադյան Ի., Սերի պայմանագիր. ազգային խնդիր, թե՛ միջազգային նախագիծ, *Իրավունքը դե-Ֆակտո*, 11.12.2008:

⁹³ Bozdaglıoğlu Yücel, Modernity, Identity and Turkey's Foreign Policy, Insight Turkey, Vol.10, No. 1, 2008, p. 66.

⁹⁴ Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), եր. 2008, էջ 149:

⁹⁵ Նույն տեղում, էջ 144:

⁹⁶ Մամուկյան Տ., Քրդստանի աշխատավորական կուսակցության գործունեության հարցի շուրջ (1980-1990-ական թթ.), Թուրքադիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 7, եր. 2011, էջ 192:

⁹⁷ Çabas Murat, KÜRT SORUNU TÜRKİYE'NİN SORUNU DEĞİL, 30 Ağustos 2009 http://www.giresunpostasi.net/haber.php?haber_id=2340.

կանում կրկին հետ բերել Սերի պայմանագիրը, և առաջին հերթին դիտարկվում է Սերի սովերի ներքո⁹⁸:

ԵՄ-ին թուրքիայի անդամակցության հասարակական աջակցության նվազումը ընդհանուր առմամբ մատնանշում է Եվրոպայի հանդեպ թուրքական հասարակության մեջ խորացող բացասական ընկալումներն ու պտրբեմները: Նեոազգայնականությունը, որն ունի հակաարևմտյան ու հակաեվրոպական դրսևորում, լայն տարածում է ստանում թուրքիայում և Արևմուտքի հետ նրա հարաբերություններում ի ցույց դնում վտանգավոր միտումներ: Արևմուտքի նկատմամբ հարաբերականորեն դրական կերպարը խաթարվում է այն ժամանակ, երբ թուրքիայի հանդեպ արևմտյան երկրների քաղաքականությունը «չի համընկնում իրենց պատկերացումներին»: Այսինքն՝ թուրք հասարակության շրջանում հակաարևմտյան տրամադրությունները մեծ մասամբ պայմանավորված են քաղաքական, և ոչ այնքան կրոնական, մշակութային կամ քաղաքակրթական գործոնով: Ըստ թուրքիայում անցկացված ուսումնասիրությունների՝ թուրքական հանրությունը միանգամից ընդգծում է իր հակաարևմտյան տրամադրությունը, երբ խոսք է լինում ինչպես թուրքիայի, այնպես էլ իսլամական երկրների նկատմամբ Արևմուտքի կառավարությունների քաղաքականության մասին: Հարցվողները մեծամասամբ դրանք ընկալում են որպես ինպերիալիստական, ապակառուցողական, ապակայունացնող ու բացասական⁹⁹: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ առանձին ուժեր թուրքիայում փորձում են առկա հակաարևմտյան տրամադրություններին տալ ավելի շատ կրոնական կամ մշակութային տարբերությունների վրա հիմնված լինելու բնույթ: Այդ համատեքստում՝ թուրքական հասարակության լայն շրջանի մեջ,

Արևմուտքի նկատմամբ ձևավորվում են կարծրատիպեր, որոնք շատ դեպքերում ասոցացվում են անվստահության ու արևմտյան ինպերիալիզմի դրսևորումների հետ:

Թուրքական «Turkish Daily News» էլեկտրոնային պարբերականի 2007 թ. հրապարակումներից մեկի համաձայն՝ թուրքիայի պետական համակարգում կա մի խումբ, որը ոչ մտուլմաններին (կլիենե դրանք դարեր շարունակ այդ երկրում ապրածները, բն նորեկները) դիտում են որպես սպառնալիքի աղբյուր, որոնց միջոցով արտաքին ուժերը փորձում են մասնատել թուրքիան. «Այլ կերպ ասած՝ «Սերի սինդրոմ»-ը կամ վախի հեգեմոնիան իշխում է թուրքիայում, ինչը համակել է նաև երիտասարդ սերնդին»¹⁰⁰:

Այս համատեքստում հետաքրքրական էր դեռևս 2005 թ. բացահայտված թուրքիայի Ներքին անվտանգության ռազմավարական փաստաթուղթը¹⁰¹ (İç Güvenlik Strateji Belgesi), որը մշակվել է ազգային անվտանգության հայեցակարգի հիման վրա և որտեղ ներկայացված էին այն բոլոր առկա և հավանական մարտահրավերները, որոնք ուղղակի սպառնալիք են ներկայացնում երկրի անվտանգությանը՝ հիմնականում անջատողական շարժումներ, քրդական հարց, իսլամական հետադիմականություն և ծայրահեղականություն և այլն: Հետաքրքիր էր հատկապես վերջին մասը, որտեղ քննարկվում են հայկական, հունական համայնքները, ատրական շարժումները, արևմտյան վիճակն ու այդ համատեքստում զարգացումները, միսիոներական գործունեությունները, միջազգային և հասարակական կազմակերպությունները և այլն: Փաստաթղթում ներքին սպառնալիք

⁹⁸ Uslu Emrullah, Aytac Onder, նշվ. աշխ., էջ 130.

⁹⁹ Bulbul Kudret, Ozipek Bekir Berat, Kalin Ibrahim, Turkish Perception of the West, Insight Turkey, Vol.10, No. 1, 2008, p. 129-147.

¹⁰⁰ Yinanç Barçın, Tear down these walls of fear and bigotry, Turkish Daily News, 21.04.2007.

¹⁰¹ Փաստաթուղթը 2005 թ. քրեական մի միջադեպի հետ կապված բացահայտվեց և նույնիսկ խոսք կար, որ դրանով իսկ հող էր նախապատրաստվում հեղաշրջում իրականացնելու համար: Այն հրապարակվեց մի քանի կայքերով: İç Güvenlik Strateji Belgesi (MGSB)-1, 31-10-2005, <http://www.savaskarsilari.org/arsiv.asp?ArsivTipID=6&ArsivAnalID=29284>.

են համարվում «երկիրը մասնատման տանող ծայրահեղ ձևի, ծայրահեղ աջ, անջատողական ուժերի ու *փոքրամասնությունների* գործողությունները: Այդ փաստաթղթի համաձայն՝ հայկական համայնքը երկրի անվտանգության դեմ ուղղված քայլեր չի իրականացնում, իսկ ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում բնակվող առօրինեղ բուրքական պետության դեմ ստեղծում են տարբեր շարժումներ ու կազմակերպություններ, որոնք պահանջում են անկախություն կամ ինքնավարություն: Ավելին, փաստաթղթի համաձայն, վերջին տարիներին արտաքին մի շարք աղբյուրների նախաձեռնությամբ ու հովանավորությամբ *Թուրքիայի* սև-ծովյան շրջաններում ակտիվացել են Հունաստանում և այլուր գործող ինքնադրամների գործողությունները, որոնք ցանկանում են կենդանացնել «խուհա-պոնտական ոգին»: Այդ փաստաթղթով *Թուրքիայի* էքսիկ-դեմոկրաթիական իրավիճակը գնահատվում է որպես լուրջ ասպարեզ արտաքին ուժերի գործունեության համար, ինչը սպառնալիք է ներկայացնում երկրի ազգային միասնությանն ու ամբողջականությանը:

2007 թ. բուրքական պարբերականներից մեկում հրատարակվեց «*Ինչու են բուրքերն այդքան շատ սիրում դավադրության տեսությունները*» վերտառությամբ հոդվածը, որտեղ հեղինակը նույնպես նկատում է, որ *Թուրքիայում* համատարած «ժողովրդականություն» են վայելում «դավադրության տեսությունները», շատերը, այդ թվում՝ մահ քաղաքական գործիչները, հավատում են, որ արտաքին ուժերի կողմից երկրի նկատմամբ դավադրություն է իրագործվում, որի նպատակը *Թուրքիայի* թուլացումն ու մասնատումն է: Ըստ հոդվածագրի՝ դրա ակունքները պատմության մեջ են, քանի որ Օսմանյան կայսրությունն իր վերջին տարիներին ճաշակեց պարտություններ, ի վերջո մասնատվեց, ստորագրվեց Սևրի դաշնագիրը և այլ մեծ քաներ: Եվ բոլորի մոտ առկա է այն կարծրատիպը, որ արտաքին ուժերն իրենց գաղտնի օրակարգում կենսունակ են պահում և քանեց-

նում են բուրքական պետության մասնատման իրենց գաղտնի ծրագիրը, որը կարող է դառնալ հենց Սևրի պայմանագիրը: Ըստ հեղինակի՝ նման վախերն ու կարծրատիպերի առկայությունը պայմանավորված են պետական գաղափարաբանությամբ: «Բանն այն է, որ հանրապետության սկզբնական տարիներից ի վեր քաղաքացիների ուղեղներում դրաշնվել է Սևրի իշխողությունը: Կրթական համակարգը և պետական քարոզչությունը մեզ անընդհատ ասել են, որ երկիրը շրջապատված է բջնամիներով, որոնք չեն ցանկանում, որ երկիրը զարգանա, լինի ապահով ու քարգտկան», -նշում է հեղինակը¹⁰²:

Ստամբուլի համալսարանի դասախոս, քաղաքագետ Բեհլու Օզքանի կարծիքով՝ Սևրի պայմանագիրը, որը դարձել է *Թուրքիայի* պարանոյան, օգտագործվում է մի շարք քաղաքական ուժերի կողմից՝ դիվիդենտներ հավաքելու համար: *Թուրք* հասարակությունը լավ ծանոթ է Սևրի պայմանագրին, և քաղաքական շատ գործիչների կողմից հանրությունը միշտ զգոն է պահվում Սևրի վկայակոչման շնորհիվ: Առաջ է մղվում այն դրույթը, որ Սևրի պայմանագիրը կենսունակ է, և դրա համար հանրությունը պետք է միշտ համախմբված ու զգոն լինի¹⁰³: Ինչ խոսք, *Թուրքիայի* քարոզչամեթոդային կողմից այս մտեցումը գրեթե միշտ կիրառվել է՝ նպատակ ունենալով հանրությանը շեղել բուրքական հասարակության ներսում տեղի ունեցող զարգացումներից, սոցիալ-տնտեսական խնդիրներից, ինչպես նաև ներքաղաքական խնդիրներից՝ ստեղծելով արտաքին բջնամուղեմ համախմբվելու արհեստածին հրամայական: Չմայած այդ երևույթի արհեստական սրացմանը, այնուամենայնիվ, վախի կարծրատիպերը գերակայող են թե հասարակական, թե քաղա-

¹⁰² Akyol Mustafa, Why Turks Love Conspiracy Theories (I), *Turkish Daily News*, 15.12.2007.

